«ԵՐԵՎԱՆԻ Հ. 167 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

# ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ




ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝
ԿԻՄԱ ՀԱՄԼԵՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ........................ ............................................................................................................................................................... .............. 4
Ծրագրի նպատակը, խնդիրները և ակնկալվող արդյունքները.................................................................................................................. ........ ...... 5
Երևանի հ. 167 դպրոցի առաքելությունը ..................................................................................................................................................... ....... 8
Հիմնախնդիրներ ......................................................................... ......... ......... ......... ......... ......... ......... ......... ......... ......... ......... ......... ......... ......... 11
Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին ........................................................................................ ..................... ................................................ 12
Հաստատության գործունեությունը..................... ..................... ..................... ..................... ..................... ..................... ..................... ..................... ...13
Իրավիճակի վերլուծություն ....................................................................................................................................... ................................................. ......17
Շենքային պայմանների վերլուծություն .................................................................................... ..................... ..................... ..................... ..................... 18
Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն.................... ..................... ..................... ..................... ..................... 27
Ծնողական և աշակերտական խորհուրդներ................................................................................ ............................................................................ 34
Մանկավարժական խորհուրդ և մեթոդական միավորումներ .............................................................. ......... ............................................................... 47
Կառավարման խորհուրդ ............................................................................................................... ........ .................................................................... 53
Կառավարման խորհրդի և տնօրենի համագործակցություն................................................................................................................................ 53
Դպրոցի համագործակցությունը համայնքի , կրթության կառավարման մարմինների , շահառու կազմակերպությունների հետ ............... ........... 59
Ուսումնական միջավայր ........................................................................................................................................... .............................................. 68
Մանկավարժական համակազմի, մասնագիտական որակները ......................................................................... ..... ....................... ............................... 75
Աշխատակազմի արժևորման , խրախուսման և ինքնակրթության հնարավորություններ .......................... ................................... ........................... 80
ՏՀՏ, կրթական տեխնոլոգիաներ, նորարարություններ ..................................................................................... ........................ ......................... 95
Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակը (ըստ ուսումնառության արդյունքների) ....... ....................... ..................... ...100
Բազմակարծիք , ներառական մասնակցային միջավայր ...................................................................................... ....................... ...............115
Ներդպրոցական վերահսկողություն.............................................................................. ...................................................................................... 121
Ֆինանսատնտեսական գործունեություն . ................................................................................................. ...................................................128
Զարգացման ծրագրի գնահատման չափանիշները և վերահսկողությունը .................................................... ........................ .........................135
Գնահատում.............................................................................................................. ..................................................................................... 136
Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցիչներն ու պահանջները.......................................... 137
Հաշվետվության աղյուսակ……………………………………………………………………………………………………… 128
Ամփոփում ………………………………………………………………………………………………………………………… 129

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼԻՍ

## ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՏԱՐԲԵՐ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

- «ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն»
- «ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենք»
- « ՀՀ Սահմանադրություն»
- «Կրթության մասին ՀՀ օրենք»
- «Հանրակրթության մասին ՀՀ օրենք»
- «Երեխայի իրավունքի մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության պետական չափորոշիչ»
- «ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ. սեպտեմբերի 22-ի «Պետական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի հունվարի 15-Ի № 16-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» №35 հրաման»
- «ՀՀ Կրթության զարգացման պետական ծրագիր մինչև 2030թ» օրենքը,
- «Երևանի զարգացման 2019-2023 թթ. հնգամյա ծրագի
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 05 օգոստոսի 2022թ. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին» № 30-Ն հրամանը և կրթության ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր
- Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան
- Հինգ տարիների ներքին գնահատման հաշվետվություններ
- ՆԴՎ պլան
- Տնօրենի, փոխտնօրենների, մեթոդական միավորումների հաշվետվություններ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում գերակա խնդիրներից է հանրակրթության բնագավառի կայուն զարգացումը, որի երաշխավորը պետությունն է: Հանրակրթության հիմքում ընկած է անհատի և հասարակության կայուն , անվտանգ զարգացումը և հայի ինքնության պահպանումը : Շեշտը դնելով հանրակրթության պետական քաղաքականության վրա, որի հենքը ազգային դպրոցն է, մեր գլխավոր նպատակն է հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված, համակողմանի զարգացած և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումը: Կարևորելով վերը նշվածը՝ դպրոցի զարգացման ծրագիրը՝ որպես հիմնարար ռազմավարական փաստաթուղթ ձևակերպում է առաջիկա 5 տարիների կրթական և դաստիարակչական գործընթացը : Համաձայն ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. N 35 հրամանի պահանջներին համապատասխան ծրագրի իրականացման հիմք են հանդիսանում ձևակերպված նպատակները և խնդիրները, որոնք նախանշում են զարգացման հիմնական ուղղությունները, դրանց իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը մեղմելու գործողությունները, ինչպես նաև այն ռեսուրսները, որոնցով պայմանավորված է ծրագրի իրատեսությունը և արդյունավետ իրականացումը:

2023-2028թ.թ. դպրոցի զարգացման ծրագրի մշակման ընթացքում հիմք են հանդիսացել նախորդ հինգ տարիների կրթական, դաստիարակչական, ֆինանսատնտեսական գործունեության համեմատական վերլուծությունները, դրանց արդյունքում ի հայտ եկած կարիքները և սահմանվել են առաջնահերթություններ, որոնք էլ արտացոլված են ծրագրի տարբեր բաժիններում:

Կարևորելով կրթության որակի բարելավման անհրաժեշտությունը՝ ծրագիրը կազմվել է այս պահին իրականացվող կրթական բարեփոխումների հիման վրա, որոնց հիմքում նոր ուժի մեջ մտնող չափորոշչային պահանջների իրականացման տեսլականն է: Ըստ հանրակրթության պետական չափորոշչի՝ որպես հիմնական նպատակ՝ ամրագրված է կարողունակությունների վրա հիմնված մոտեցման հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովման անհրաժեշտությունը: Սահմանված են նաև միջնակարգ կրթության կարողունակությունները: Դրանք են՝

**ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- ԹՎԱՅԻՆ ԵՎ ՄԵԴԻԱ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
- ԼԵԶՎԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵԼՈՒ
- ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
- ՏՆՏԵՍԱԿԱՆ
- ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
- ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

Ծրագիրը մշակելիս մանկավարժների, ծնողների և աշակերտների շրջանում կատարվել են կարիքի գնահատման մի շարք հարցումներ, որոնց վերլուծման արդյունքում ի հայտ եկած իրատեսական և առանցքային կետեր ներառվել են փաստաթղթի տարբեր հատվածներում, մշակվել են ռազմավարական ուղղություններ: Քանի որ ծրագիրը իր մեջ ներառում է դպրոցի գործունեության համաքական պատկերը, կազմակերպվել են խորհրդատվական հանդիպումներ կառավարման և խորհրդակցական մարմինների անդամների հետ՝ բացահայտելու դպրոցի հնարավորություններին համահունչ կրթական կարիքները և ռազմավարական ուղղությունները: Ծրագրի մշակմանը նախորդող ամիսների ընթացքում մշտադիտարկման և վերահսկողական մեխանիզմների գործադրմամբ կատարվել են բազմակողմանի վերլուծություններ, առաջարկվել են լուծումներ և պրակտիկ գործողություններ:



## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացումը 21-րդ դարի պահանջներին համապատասխան պետության զարգացման խնդիրներից և հանրակրթության նպատակներից բխող կրթության ապահովումն է: Առաջնորդվելով պետության կրթական

քաղաքականությամբ՝ կազմակերպել որակյալ կրթություն, որը պետք է միտված լինի սովորողների կայուն և ներդաշնակ զարգացմանը, իրականացնել հասարակական պահանջներից բխող , ՀՀ կառավարության կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան, իր կարողունակություններով մասնագիտական կողմնորոշում ունեցող հայ մարդու և քաղաքացու դաստիարակությունը:



## ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. **Չափորոշչային պահանջների յուրացումը** սովորողների կողմից՝ կրթական տարբեր աստիճաններում
2. **Ժամանակակից կրթական միջավայրի ստեղծում**, որը համապատասխանում է արդի կրթությանը, սովորողների առանձնահատկություններին և համայնքի կարիքներին
3. **Մանկավարժների մասնագիտական որակավորման բարձրացմանը** միտված գործողությունների կազմակերպում
4. **Ներդպրոցական վերահսկողության** բարելավում
5. **Ներքին նորմատիվ ակտերի** զարգացում՝ հինգ տարիների կրթական քաղաքականութան բարեփոխումներին համապատասխան
6. **Առաջիկա հինգ տարիների զարգացման հաջորդական քայլերի վերլուծություն** և առաջնահերթությունների սահմանում
7. **Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը** նպաստող գործողությունների խթանում
8 .**Մասնակցային և համագործակցային կառավարման իրականացում,** առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում
9 .**Նյութատեխնիկական բազայի համալրում և շենքային պայմանների բարելավում,** որը կնպաստի ուսումնական միջավայրի արդիականացմանը, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հարմարավետ պայմանների ապահովումը:



## ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Չափորոշչային պահանջներին համապատասխան սովորողների կրթության իրավունքի իրացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության հիմնարար փաստաթղթերի պահանջների

- Հավասար հնարավորությունների և մատչելիության ստեղծում, միջավայրի ապահովում, սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին կրթության շարունակականության, հաջորդականության և համապատասխանության ապահովում
- Մասնագիտական բարձր որակներով, մոտիվացված և դպրոցի տեսլականին և արժեքներին միտված մանկավարժական համակազմի առկայություն
- Մանկավարժի մասնագիտական զարգացման անհատական կարիքից բխող վերապատրաստում անցած մանկավարժական համակազմ
- Ժողովրդավարական սկզբունքներով կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության իրականացում, սկզբունքների ապահովում, դրանց միջև փոխգործակցության ապահովում
- Ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռում
- Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացում, արդյունավետության բարձրացում ուսումնադաստիարակչական, կառավարման և վարչատնտեսական գործունեության բոլոր օղակներում
- Նյութատեխնիկական բազայի հարստացում՝ միտված ուսումնադաստիարակչական նպատակների իրականացմանը
- Ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանում, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության զարգացում
- Ազգային պետության գաղափարով և համամարդկային արժեքներով կրթության իրացում և սովորողի դաստիարակում
- Սովորողների կողմից ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերում և ինքնուրույն կյանքի նախապատրաստում
- Մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական գործունեության նախապատրաստում
- Ակադեմիական որակի շարունակական բարելավում
- Ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցների՝ սովորող , սովորողի ծնող և ուսուցիչ, վարչական, այլ մանկավարժական ախատողների փոխադարձ կապի ապահովում: Փոխվստահության և համագործակցության միջավայրի առկայություն:



ԵՐԵՎԱՆԻ Հ. 167 ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

**Ինչպես ձևակերպված է ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրում,** երկրի զարգացման հիմնական ռեսուրսը կրթված և գիտելիքներով զինված մարդկային կապիտալն է:

Յուրաքանչյուրն օժտված է որոշակի տաղանդով և կրթության համակարգի առաքելությունն է բացահայտել և հնարավորին չափ զարգացնել յուրաքանչյուրի տաղանդը՝ ընդլայնելով իր երկրում սեփական բարեկեցությունն ապահովելու անհատի հնարավորությունները, որի երաշխավորը պետք է լինեն մրցունակ տնտեսությունն ու կայուն պետությունը: **Սա է 2030 թ. զարգացման պետական ծրագրի** տեսլականը,որի վեջնական նպատակը ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ ձևավորելն է, որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն կտա ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն և կհանրահռչակվի կրթությունը՝ որպես հանրային բարիք՝ ապահովելով կրթության բոլոր շահակիցների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը՝ ձևավորելով ակտիվ քաղաքացիական դիրքորոշում և մասնակցային ժողովրդավարության վրա հենվող հանրային համերաշխություն»:

ՀՀ կրթական քաղաքականությունից բխող և հանրակրթական պետական չափորոշչի պահանջներին համապատասխան կրթության կազմակերպման, որակի, հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների պահանջները ապահովելու համար առաջիկա հինգ տարիների դպրոցի առաքելությունը.

ՀՀ կառավարության կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան, իր կարողունակություններով դիրքորոշում, մասնագիտական կողմնորոշում ունեցող հայ մարդու և քաղաքացու կրթությունն ու դաստիարակությունն է:

Դպրոցի առաքելության իրականացման համար անհրաժեշտ պայման է մարդկանց համախմբումը ընդհանուր տեսլականի շուրջ, կարիքների գնահատումը ըստ ոլորտների ,անհրաժեշտ փոփոխությունների և լուծումների առաջադրումը , դպրոցի գործունեության ոլորտների ռազմավարական նպատակների և խնդիրների սահմանումը : Առաքելության արդյունավետության նպատակով առաջնորդվելու եմ հետևյալ բաղադրիչներից կազմված պլանով.




**Առաքելության իրականացման երաշխավորներ՝**

1. Կարողունակ և գրագետ մանկավարժ՝ օժտված մանկավարժական որակներով
2. ՏՀՏ գործիքներին տիրապետող և կիրառող համակազմ
3. Կրթության ոլորտի բարեփոխումները ընկալող և օգտագործող մանկավարժական համակազմ
4. Մասնակցային և բազմակարծիք կառավարման սկզբունքները կրող վարչական կազմ
5. Համընդհանուր հավասար ներառական միջավայրով կրթության կազմակերպողներ
6. Գործուն ծնողական և աշակերտական խորհուրդներ
7. Սովորողների հետաքրքրություններին և նախասիրություններին համապատասխան արտադպրոցական և երկարօրյա ուսուցման կայուն համակարգ, արհեստավարժ խմբակավարներ
8. Համայնքի, ծնողների և կրթության կառավարման այլ մարմինների հետ համագործակցող համակազմ
9. Սովորողների կրթական, առողջապահական, ընկերային շահերի և իրավունքների լիարժեք կիրարկում
10. Ֆինանսատնտեսական արդյունավետ կառավարում և արդյունավետ վարչատնտեսական կազմ

## ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

**ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

**ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

**ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

1. Կառավարում

- Ուսուցչի ոչ նպատակային գերծանրաբեռնվածություն, կադրերի արտահոսք
- Մանկավարժական և վարչատնտեսական անձնակազմի կարիքին ոչ համապատասխան մասնագիտական զարգացում և որպես հետևանք դպրոցի անմիջական կարիքին համապատասխանող կադրերի պակաս
- Ոչ լիարժեք համագործակցություն խորհրդակցական և կառավարման մարմինների միջև (հաստատության խորհուրդ,ծնողական և աշակերտական խորհուրդ, համայնք)
- Հաղորդակցության պակաս կառավարման տարբեր ստորաբաժանումների միջև
- Իրավիճակների ոչ լիարժեք վերլուծություն և հետադարձ կապ
- Ենթակառուցվածքների և նոր տեխնոլոգիաների հասանելիության խնդիր(դպրոցի անբարենպաստ դիրք, ինտերնետ կապի խնդիրներ  և այլն)
- Ժամակակից տեխնոլոգիական պահանջների համապատասխանող մարդկային ռեսուրսի պակաս

2. Ուսումնադաստիարակչական աշխատանքներ՝

- Դասարանների կառավարման մարտահրավերներ
- Անհատական կրթական աջակցության մեխանիզմների պակաս
- Սովորողների սովորելու մոտիվացիայի պակաս
- Դպրոց –ծնող-ուսուցիչ. ոչ արդյունավետ համագործակցություն

3. Վարչատնտեսական գործընթացի կառավարում՝

- Բյուջեի պլանավորման սահմանափակումներ
- Ուսումնական միջավայրի ոչ լիարժեք ապահովում
- Ռեսուրսների ոչ օպտիմալ կառավարում

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

| Հաստատության անվանում | «Երևանի հ. 167 հիմնական դպրոց» ՊՈԱԿ |
|---|---|
| **Հասցե** | ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Սարի թաղ 28 փ հ 1 |
| **Հարկայնություն 1-ին մասնաշենք** | 4 |
| **2-րդ մասնաշենք** | 3 |
| **Շենքերի տեսակը** | տիպային, քարե |
| **Մասնաշենքերի քանակ** | 2 |
| **Տարածքի մակերես** | 0,5828 (հա ) |
| **Շենքի մակերես** | 2780,3 (քմ2) |
| **Կառուցման տարեթիվ** | 1974թ. |
| **Ելքերի քանակ. հիմնական** | **3, 1 պահուստային** |
| **Նախագծային հզորությունը** | **900** |
| **Աշխատանքային ռեժիմը** | Հնգօրյա , միահերթ |
| **Սովորողների թիվ** | 281 (2022-2023 ուսումնական տարվա տվյալներ) |
| **Աշխատակիցների ընդհանուր թիվ** | 35 |
| **Պաշտոնական կայք** | http://yerevan167.schoolsite.am |
| Սոցիալական հարթակ | https://www.facebook.com |

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ





Երևանի Սարի թաղում գտնվող 167 հիմնական դպրոցը մշտապես եղել է ժամանակին համահունչ գործող, ՀՀ պետական կրթական քաղաքականության առաջնահերթություններին հետևող և իր առջև դրված հիմնախնդիրները իրականացնող ուսումնական հաստատություն: Գերակա խնդիրն է եղել հանրակրթական պետական չափորոշչով սահմանված կրթության կազմակերպումը, որի գաղափարական հիմքում ընկած է եղել բազմակարծիք , ներառական և մասնակցային միջավայրի ձևավորումը:

Դպրոցում ուսուցանվում է երկու օտար լեզու՝ ռուսերեն, անգլերեն: Գործում են «Բանավեճ» , «Ասմունք» , «Հաղորդակցական անգլերեն», «Պատանի ընթերցասեր» , «Օլիմպիական մաթեմատիկա» և «Արևներ երգչախումբ » խմբակները: Ուսումնադաստիարակչական աշխատանքները իրականացվում են կրթության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերին համապատասխան՝ սահմանելով գործունեության առաջնահերթություններ:Կրթական գործընթացը կազմակերպվում է ՆԴՎ պլանին համապատասխան և կառավարման խորհրդի վերահսկողությամբ : Վերը նշված կետերը զարգացման ծրագրի համապատասխան հատվածներում ներկայացված են վերլուծությունների ձևով:

Սարի թաղում, որտեղ գտնվում է դպրոցը, կա երեք ուսումնական հաստատություն, ընդ որում Խ.Սամուելյանի անվան h.47 դպրոցը միջնակարգ է, ինչը անհավասար պայմաններ է ստեղծում մյուս երկու դպրոցների նկատմամբ : Աշակերտների թիվը 540 է՝ պայմանավորված միջնակարգ ծրագրով և շահեկան դիրքով : Հ. Սահյանի անվան h. 70 հիմնական դպրոցը գտնվում է ավելի շահեկան դիրքում՝ 167 դպրոցից ընդամենը 800 մ հեռավորության վրա և ունի 105աշակերտ: Հ.167 հիմնական դպրոցը, գտնվելով Սարի թաղի ծայրամասում (թաղամասը այդ մասում ավարտվում է), ունի 267 աշակերտ, որը առավելագույն հնարավորությունն է տվյալ աշխարհագրական դիրքում (քաղաքից կտրված, սեփական տներով հատված է, որն ունի նաև հասանելիության խնդիր), ինչով պայմանավորված աշակերտների թվի աճ գրանցելը գրեթե անհնարին է: Աշակերտների հիմնական մասը դպրոց են հաճախում հասարակական տրանսպորտով կամ սեփական փոխադրամիջոցներով: Դպրոցը, շնորհիվ բարի համբավի, ունի ծնողների անդավաճան համայնք, որը, կրելով դժվարություններ, իրենց երեխաների ուսուցումը և կրթությունը վստահում է մեզ: Տարիներ շարունակ դպրոցի համակազմը ջանք ու եռանդ չի խնայել՝ խթանելու համայնքի սերը դեպի կրթություն, դեպի դպրոց՝ ստեղծելով սերտ կապ ծնողի և դպրոցի միջև: Ուսուցիչների թիվը 21 է, աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 35:

Վերջին հինգ տարիների ընթացքում շեշտը դրվել է ՏՀՏ գործիքների ձեռքբերման, ժամանակակից կրթություն իրականացնելու, կրթական առողջ և գործուն միջավայր ստեղծելու՝ այն է նոր հանդիսությունների դահլիճ, «Սմարթ», համակարգչային և առարկայական դասասենյակներ: Սանիտարահիգիենիկ նորմի ապահովումը դրված է բարձր մակարդակի վրա, իրականացվել են սանհանգույցների վերանորոգումներ: Հարցումների միջոցով պարբերաբար իրականացվել է կարիքի գնահատում մանկավարժների,ծնողների և աշակերտների շրջանում՝ կառավարման համակարգը դարձնելով ավելի թափանցիկ և ժողովրդավար: Ուսուցչական կազմը համալրվել է արհեստավարժ և գիտակ մասնագետներով, որոնց հետ պարբերաբար տարվել են մասնագիտական կարողությունների զարգացմանը նպաստող միջոցառումներ: Երկու հուշագրի շրջանակներում համագործակցություններ են ստեղծվել մեր և ութ դպրոցների /6,34,47,178 և 89,155/ միջև:

Վերջին երեք տարիներին երկրի առջև ծառացած հիմնախնդիրներով պայմանավորված՝ դպրոցի անձնակազմը ֆորսմաժորային իրավիճակներում (համավարակ, 44-օրյա պատերազմ) դրսևորել է արագ կողմնորոշման, ինքնակազմակերպման, համախմբվածության բարձր որակներ: Մանկավարժական կազմը իրականացրել է իր առջև դրված խնդիրները՝ միաժամանակ կանգուն պահելով իրենց կրթօջախը, իրականացնելով բարձր որակի կրթություն և հայրենիքը պաշտպանող և շենացնող սերնդի դաստիարակում: Պատկերի ամբողջական լինելու համար կցվում է 2018-2023 թթ. դպրոցի գործունեությունը:

«2018-2023» ուստարիների ընթացքում հ. 167 հիմնական դպրոցում կազմակերպվել և իրականացվել են տարաբնույթ աշխատանքներ: Դրանք ներկայացվում են ստորև՝ ըստ ուսումնական գործընթացի կազմակերպման բաժինների՝

- վերանորոգվել է դպրոցի 3-րդ հարկի սանհանգույցը (14 քմ), բարելավվել է թվով 3 սանհանգույց (42 քմ), կատարվել են թվով 20 դասասենյակների (1000.14 քմ ), միջանցքների վերանորոգման, լաքապատման (360 քմ) և մի շարք այլ աշխատանքներ
- աշակերտական, մանկավարժական համակազմի մասնակցությունը համաքաղաքային, համապետական շաբաթօրյակներին
- տարաբնույթ միջոցառումներ՝ ռազմահայրենասիրական, մշակութային, գեղագիտական ճաշակ ձևավորելու, բեմական, գրական խոսքի զարգացման, արվեստի (ազգային երգ ու պար, թատրոն, երաժշտություն, գրականություն, կինո, օպերա, նկարչություն) տարբեր ճյուղերի, նշանավոր գործիչների, նրանց ստեղծագործությունների հետ կապի հաստատում, ներդպրոցական և արտադպրոցական մրցութային միջոցառումների կազմակերպում

  («Անուշ» պոեմի բեմադրություն- I մրցանակ
  «Մոնթե Մելքոնյան»- II մրցանակ
  «Գարեգին Նժդեհ»- I մրցանակ)
- այցելություն թանգարաններ, համերգասրահներ, Եռաբլուր, Վարպետաց քաղաք, պատմամշակութային արժեք ունեցող վայրեր
- ծնողական համայնքի, մանկավարժական համակազմի համատեղ ջանքերով ամենամյա ավանդույթ դարձած մեր երկրի սահմաններն անառիկ պահող դպրոցի նախկին սան-զինվորների համար անհրաժեշտ պարագաներով, քաղցրեղենով ծանրոցների առաքումը զորանոցներ
- տարբեր սպորտաձևերում և մշակութային տարբեր մրցույթ-փառատոններում դպրոցների սաների գրանցած հաջողությունների լուսաբանում
- հանդիպումներ ԱԻՆ-ի, ՀՀ ոստիկանության աշխատակիցների հետ, ովքեր հանդես են եկել դասախոսություններով՝ աշակերտներին ծանոթացնելով սեյսմիկ պաշտպանության վարքականոններին, աղետների դիմակայության, տարհանման կանոններին, քաղպաշտպանության, ճանապարհային անվտանգության, իրավախախտումների և դրանց աղետալի հետևանքների մասին, ինչպես նաև տակտիկական հատուկ ուսումնավարժանք են անցկացրել
- դպրոցականներին և մանկավարժներին հրաձգարանում տրվել է զենքի քանդման և հավաքման աշխատանքներին մասնակցելու հնարավորություն
- դպրոցի 6 ուսուցիչներ դիմել են I և II տարակարգի

- 1 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորման
- իրականացվել են հերթական ատեստավորումներ, ՏՀՏ վերապատրաստումներ (ԿՏԱԿ-ում, էլեկտրոնային մատյանում աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար)
- միջդպրոցական մեթոդմիավորումների ձևավորում (հ, 155, հ. 89 և հ. 167 հիմնական դպրոցների միջև)
- հուշագրի շրջանակներում համագործակցություն հ. 47 միջնակարգ, հ. 34, հ. 178, հ. 6 և հ. 167 հիմնական դպրոցների միջև: Երկու հուշագրերի շրջանակներում կազմակերպվել են գրքերի քննարկումներ(Համաստեղ «Երնեկ այն օրերուն», Աղասի Այվազյան «Սովորական մարդու գինը»)
- կազմակերպվել են վիկտորինաներ, առարկայական մրցույթներ, միջառարկայական կապերով համեմված դասեր, որոնք նպաստել են նաև մանկավարժական մասնագիտական որակի և հմտության զարգացմանը:
- ՆԴ վերահսկողության շրջանակներում պարբերաբար կատարվել են դասալսումներ, թեմատիկ և բազմակողմանի ուսումնասիրություններ են կատարվել տարակարգի ներկայացված ուսուցիչների մոտ
- Մասնակցություն ՀՊՉ, ներդպրոցական վերապատրաստումներին:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



# ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հ. 167 հիմնական դպրոցը հիմնադրվել է 1974 թ-ին,Երևանի հնագույն թաղերից մեկում՝ Սարի թաղում: Քարե շենք է՝ կազմված 2 մասնաշենքից (հիմնական մասնաշենքը՝ 4 հարկ, 2-րդ մասնաշենքը՝ 3 հարկ): Երկրորդ մասնաշենքը 2008 թվականին Քաղաքաշինության նախարարության կողմից նախատեսված վերանորոգման ծրագրով ենթարկվել է վերանորոգման, ապահոված է սպորտային գույքով, ունի հարմարավետ հանդերձարաններ և սանհանգույցներ: Սպորտդահլիճում դասապրոցեսը կազմակերպելուց զատ վարչական շրջանի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է Էրեբունի վարչական շրջանի միջդպրոցական սպորտլանդիաների ամփոփիչ հանդիպումներ և հ. 67 ՆՈՒՀ-ի հետ ամենամյա, արդեն ավանդույթ դարձած սպորտլանդիայի կազմակերպումը: Դպրոցն ունի գեղեցիկ և հարմարավետ հանդիսությունների դահլիճ, որտեղ պարբերաբար կազմակերպվում են յուրօրինակ միջոցառումներ, վիկտորինաներ և մրցույթներ: Առկա են առարկայական կաբինետներ (շախմատ, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, տեխնոլոգիա, ՆԶՊ ) և հրաձգարան , որտեղ տարին երկու անգամ 5-9-րդ դասարանի աշակերտները հրաձգության մրցույթների միջոցով ծանոթանում են զենքի պրակտիկ կիրառմանը: Դպրոցն ունի վերանորոգված գրադարան՝ անհրաժեշտ գույքով , դասագրքերով և գրականությամբ, որից օգտվում են դպրոցի աշակերտների մոտավորապես 30%-ը և ուսուցիչները: Ներկայումս ուսումնական հաստատության հիմնական մասնաշենքի հետ կապված ծառացել են խնդիրներ, որոնց լուծումները հնարավոր են ճիշտ նպատակադրման և կառավարման պարագայում ՝ ունենալով պետական աջակցություն : Մասնաշենքերի տանիքը 2022թ. սեպտեմբերին ուժեղ քամուց վնասվել է (տանիքի մեկ ամբողջական հատված պոկվել է) և միայն պետական աջակցության դեպքում է հնարավոր այս խնդրի լուծումը : Դիմել ենք պատկան մարմիններին: Պատուհանները հին են , որոնց փոխելը հնարավոր կլինի փուլային տարբերակով կամ պետական աջակցությամբ : Վերջին հինգ տարիների ֆինանսական միջոցները ծախսվել են դասասենյակների , սանհանգույցների և միջանցքների վերանորոգման , գույքի և ՏՀՏ գործիքների ձեռքբերման համար՝ապահովելով բարենպաստ կրթական միջավայր: Շենքը չունի պատսպարաններ, որոնց անհրաժեշտությունը ամբողջովին ընկալվեց 44-օրյա պատերազմի հետ: Պատսպարանների կառուցումը (նկուղը ի սկզբանե ամբողջովին լցված է եղել հողով) հնարավոր է միայն պետական աջակցության պարագայում: Քանի որ հիմնական մասնաշենքի բոլոր միջանցքները պատված են մանրահատակով , կատարվել է ամբողջ մակերեսի լաքապատում:

«Ի՞նչը կփոխեի գրադարանում» հարցին աշակերտների 40%-ը պատասխանել է «Ոչինչ չէի փոխի», 50%-ը կուզեր տեսնել այն արդիական գույքով և ՏՀՏ գործիքներով համալրված, իսկ 10%-ը դժվարացել է պատասխանել հարցերին :




| ԱՆՎԱՆՈՒՄ | ՉԱՓ/ՔԱՆԱԿ | ՄԱԿԵՐԵՍ (ՔՄ) |
|---|---|---|
| **Դասարանների քանակ** | 25 | 1290.60 |
| **Առարկայական սենյակ** | Համակարգչային | 32,4 |
| | Շախմատ | 31,0 |
| | Կենսաբանություն | 48,6 |
| | Տեխնոլոգիա | 50,40 |
| | ՆԶՊ | 50,40 |
| | Երաժշտություն | 51,0 |
| | Ֆիզիկա | 67,2 |

| | | |
|---|---|---|
| Առանձնասենյակ | 4 | 128.00 |
| Զենքի պահեստ | 1 | 8.0 |
| Ուսուցչանոց | 1 | 31,0 |
| Սպորտդահլիճ | 1 | 310,90 |
| Լաբորատորիա | 2 | 31,8 |
| Գրադարան | 1 | 50,40 |
| Ճաշարան/բուֆետ | 1 | 83,40 |
| Բուժսենյակ | 1 | 16,20 |
| Նիստերի դահլիճ | 1 | 84,0 |
| Զուգարան | 6 | 74,40 |
| Լոգարան | 2 | 6,00 |
| Բացօթյա սպորտհրապարակ | 1 | 350,0 |
| Հանդերձարան | 8 | 77,20 |
| Տեխնիկական նշանակության սենյակ | 2 | 117,80 |
| Հրաձգարան | 1 | 50,40 |
| Նկուղ | 1 | 620,0 |
| Կաթսայատուն | 1 | 33,0 |
| Վարձակալություն | 1 | 80,7 |

Դպրոցը ջեռուցվում է և ապահովված է ջրամատակարարմամբ: Պետբյուջեից հատկացված ֆինանսական միջոցների խնայողությունների հաշվին յուրաքանչյուր տարի իրականացվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որոնք շարունակական են լինելու:

| Ջրամատակարարումը | Շուրջօրյա կենտրոնացված |
|---|---|
| Կոյուղացումը | Կենտրոնացված |
| Էլեկտրամատակարարումը | Առկա է |
| Գազամատակարարումը | Առկա է |
| Ջեռուցումը | Կենտրոնացված |
| Հեռախոսային կապը | Առկա է |
| Ինտերնետային կապը | Առկա է |

## ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

| ՈԼՈՐՏԸ | ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ |
|---|---|---|
| **Շենքային պայմանները**<br>**Նյութատեխնիկական բազայի համալրում** | 2018-2023թթ ընթացքում վերանորոգվել են 20 դասասենյակներ և 2 առարկայական կաբինետ: | Պետական բյուջե |
| | Վերանորոգվել է գրադարանը:Պայմաններ են ստեղծվել տեղում ընթերցանություն կազմակերպելու համար | Պետական բյուջե |
| | Ստեղծվել է հրաձգարան՝ զենքի հետ պրակտիկ շփում ունենալու համար | Պետական բյուջե |
| | Վերանորոգվել է մեկ սանհանգույց | Պետական բյուջե |
| | 360 քմ միջանցքների լաքապատում | Պետական բյուջե |
| | Նվիրյալների պատի ստեղծում | Պետական բյուջե |
| | Ձևավորվել է համակարգչային կաբինետ, ձեռք են բերվել 4 համակարգիչներ և 1 նոթբուք | Պետական բյուջե |
| | Գրապահարան 5 հատ | Պետական բյուջե |
| | Աշակերտական գույք՝ 20 սեղան , 40 աթոռ | Պետական բյուջե |
| | Երաժշտական կենտրոն | Պետական բյուջե |

# SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| **Ուժեղ կողմեր(Strengths)** | **Թույլ կողմեր (Weaknesses)** |
|---|---|
| ✓ Սեյսմակայուն քարե շինություն<br>✓ Տարհանման և պատսպարման պարբերական վարժանքների անցկացում, քաղպաշտպանության պլանների առկայություն և պատշաճ իրականացում<br>✓ Վերանորոգված միջանցքներ՝ ամբողջովին լաքապատված մանրահատակով<br>✓ Ամբողջովին վերանորոգված սանհանգույցներ (թվով 6)<br>✓ Բարեկարգ մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ<br>✓ Վերանորոգված և նոր գույքով համալրված դասասենյակներ(թվով 12)<br>✓ Համակարգչային և «Սմարթ» դասասենյակների առկայություն<br>✓ Բարեկարգ ուսուցչանոց<br>✓ Հրաձգարանի առկայություն<br>✓ ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիա<br>✓ Լուսավոր և օդափոխվող տարածքներ | × Բազմաթիվ խնդիրներ առաջացնող վերանորոգման ենթակա տանիք<br>× Հանդիսանալով արտակարգ իրավիճակներում ԺՏԿ ծավալման կետ. դպրոցը չունի պատսպարաններ<br>× Ջերմամեկուսիչ պատուհանների բացակայություն<br>× Դպրոցի անբարեկարգ բակ<br>× Բացօթյա սպորտհրապարակի անբարեկարգ վիճակ<br>× Համընդհանուր ներառմամբ ժամանակակից կրթություն կազմակերպելու թերի ուսումնական միջավայր<br>× Ժամանակակից պահանջները թերի բավարարող գրադարան<br>× Արդիական ճաշարանի բացակայություն<br>× Տարրական դպրոցի դաս-միջոցառումների, բաց դասերի ռեսուրս դասասենյակի բացակայություն<br>× Սպորտդահլիճի մասնակի վերանորոգման կարիք |
| **Հնարավորություններ(opportunities)** | **Ռիսկեր(Threats)** |
| ✓ Ընդհանուր վերանորոգում պետական ծրագրերով(դպրոցը ներառված է սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրում)<br>✓ Տանիքի վերանորոգում պետական աջակցությամբ<br>✓ Շրջանավարտների խորհրդի ձևավորմամբ և աջակցությամբ ֆինանսական լրացուցիչ հոսքի ապահովում | × Թերի ֆինանսավորում<br>× Ֆինանսավորման ձևի և կարգի ոչ օպտիմալ փոփոխություններ<br>× Արտակարգ իրավիճակներ<br>× Օրենքների փոփոխություն, որի հետևանքը կարող է լինել լիազորությունների սահմանափակումը |

Համադրելով SWOT վերլուծության չորս բաժիններում նշված գործոնները և, ի մի բերելով տվյալ գործոնների փոխկապակցվածության հնարավորությունները, սահմանվել են նպատակներ և խնդիրներ , ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ և առանձնացվել է առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ռազմավարական գործողությունների այն ցանկը, որը բերելու է դպրոցի շենքային պայմանների բարելավմանը.

## ՆՊԱՏԱԿ

- ✓ Ստեղծել այնպիսի շենքային պայմաններ, որոնք հնարավորություն կտան ձևավորել ժամանակակից կրթության կազմակերպման համար ուսումնական միջավայր` հիմքում դնելով պետության և համայնքային պահանջները:

## ԽՆԴԻՐՆԵՐ

- ✓ Բարելավել ֆիզիկական միջավայրը
- ✓ Ստեղծել համընդհանուր ներառման համար հարմարեցված միջավայր
- ✓ Ապահովել ուսումնական միջավայրի անվտանգ կենսագործունեության պահանջները

## ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ➢ Գործառույթների ճիշտ բաշխում` պայմանավորված կառավարման նոր մոդելով
- ➢ Ծրջանավարտների խորհրդի միջոցով լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթում
- ➢ Վարչատնտեսական մասի համակարգողի հետ նույն նպատակների և տեսլականի շուրջ համախմբում

## ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ | Ֆինանսական աղբյուրներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Վերահսկողական մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ռեսուրս կաբինետի ստեղծում՝ տարրական դասարանների միջցառումների և բաց դասերի կազմակերպման համար | Վարչատնտեսական համակարգող | 2023-2024 | Շինանյութ և շինարարական այլ պարագաներ | Պետբյուջե | Մեկ տարում 1 ռեսուրս կաբինետի հիմնում ,1 համակարգիչ 16 աշակերտական սեղան , 32 աթոռ, 1 ուսուցչական սեղան | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 2 | Տանիքի վերանորոգում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2023-2028 | Ցինկապատ ծալքաթիթեղ , փայտե կամ երկաթե պատվանդաններ, այլ անհրաժեշտ պարագաներ | Լրացուցիչ միջոցների առկայության դեպքում | 800 քմ մակերեսով վերանորոգված տանիք | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 3 | Պատսպարանների կառուցում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2024-2028 | Ավազ , ցեմենտ , շինտեխնիկա, փայտե պատվանդաններ | Լրացուցիչ միջոցների առկայության դեպքում | 1պատսպարան 100,8քմ | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 4 | Պատուհանների փոխում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2024-2028 | Պատուհաններ, ավազ ցեմենտ, գաջ, փրփրապլաստ և այլն | Պետբյուջե փուլային տարբերակով | 18 պատուհան , 4 քմ մակերեսով | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Բակի բարեկարգում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2027-2028 | Ասֆալտ, ձյութ | Լրացուցիչ միջոցների առկայության դեպքում | Ասֆալտապատում 200քմ | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին |
| 6 | Թեքահարթակի կառուցում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2025-2026 | Ցեմենտ , ավազ | Պետբյուջե | Ներառական կրթության լիարժեք կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,առնվազն մեկ թեքահարթակ բակի աստիճաններին կից | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 7 | Ճաշարանի վերանորոգում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2023-2024 | Շինանյութ և շինարարական այլ պարագաներ | Պետբյուջե | Բարելավված ուսումնական միջավայր 36 քմ մետր մակերեսով վերանորոգված ճաշարան | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 8 | Սպորտդահլիճի վերանորոգում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2024-2025 | Շինանյութ և շինարարական այլ պարագաներ | Պետբյուջե | Բարելավված ուսումնական միջավայր360 քմ յուղաներկով պատի ներկմամբ և նոր գծանշումներով սպորտդահլիճ | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություն ներ |
| 9 | Դասասենյակների վերանորոգում /թվով 10/ | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2024-2027 | Լաք, ներկ , լատեքս | Պետբյուջե | Բարելավված ուսումնական միջավայր:Տարին առնվազն երկու վերանորոգված դասասենյակ | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություն ներ |
| 10 | Կառավարման նոր | Տնօրեն | 2023 | Նորմատիվ | Ներքին | Գործառույթները հստակ | Լիազոր մարմին |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մոդելով պայմանավորված գործառույթների հստակեցում | Վարչատնտեսական համակարգող | | իրավական ակտեր | մարդկային ռեսուրս | պատկերացնող և միևնույն տեսլականի շուրջ համախմբվող տնօրեն , վարչատնտեսական համակարգող, աշխատակազմ | Կառավարման խորհուրդ Տնօրենի հաշվետվություն Վարչատնտեսական համակարգողի հաշվետվություն |
| 11 | Շրջանավարտների խորհրդի ստեղծում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթհայթման համար | Տնօրեն | 2024 | Կոնտակտային տվյալներ | Ներքին մարդկային ռեսուրս | Ձևավորված շրջանավարտների խորհուրդ | ՄԿՍ գծով համակարգողի հաշվետվություն |

## ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

| ՑՈՒՑԻՉ | ՍԱՆԴՂԱԿ | | | |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ | 0% | 50% | 75% | 100% |



## ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիների ընթացքում դպրոցը, ունենալով բավականին սահմանափակ ֆինանսական միջոցներ, վերազինվել է նոր և արդիական գույքով, համակարգիչներով (4), նոթբուքով (2), «Սմարթ» գրատախտակով, պրոյեկտորով, պրոֆեսիոնալ երաժշտական և շարժական արդիական տեխնիկայով, դպրոցի տեսահսկման համակարգով, հակահրդեհային տարրական միջոցներով՝ կրակմարիչներ, հրշեջ վահանակներ՝ ապահովելով հնարավորինս որակյալ և ժամանակակից կրթական միջավայր:

Դպրոցում գործում են հրաձգարան՝ զենքի պրակտիկ կիրառման հնարավորություններով , ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաներ, կենսաբանության առարկայական կաբինետ՝ ժամանակակից դիդակտիկ նյութերով և պարագաներով (տորս, պաստառներ, օրգանների մոդելներ, կենդանիների մուլյաժներ), համակարգչային դասարան ՝ժամանակակից համակարգչային տեխնիկայով, տեխնոլոգիայի և այլ առարկաների կաբինետներ: Ուսումնանյութական բազայի համալրումն ու արդիականացումը շարունակական բնույթ է կրում և համալրումը ներառված է նյութատեխնիկական բազայի գործողությունների պլանում , որն էլ կարևոր ռազմավարական ուղղություններիցէ:

Հանրակրթության կարևոր խնդիրներից է ներառական կրթության կազմակերպումը հանրապետության բոլոր դպրոցներում: Դպրոցում ներկայումս սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երկու աշակերտ: Ներառական կրթության կազմակերպման անհրաժեշտ պայմանների ապահովմանն ուղղված գործողությունների իրականացումը ևս առաջնահերթության մաս է կազմում:

| ԱՆՎԱՆՈՒՄ | ՔԱՆԱԿ/ՉԱՓ |
|---|---|
| Գրքերի ընդհանուր քանակ | **2871** |
| Գեղարվեստական գրքեր | **2525** |
| Պրոյեկտոր | **1** |
| Էկրան | **1** |
| Բազմաֆունկցիոնալ տպիչ | **2** |
| Նոթբուք | **2** |
| Դահլիճի ձայնային սարքավորումներ | **1** |
| Համակարգիչներ | **11** |
| Ինտերակտիվ գրատախտակ | **1** |
| Շարժական երաժշտական կենտրոն | **1** |
| Սովորական տպիչ | **1** |
| Տեսախցիկներ | **16** |
| Տեսախցիկների վահանակ | **1** |
| Սպորտային այծիկ | **3** |
| Սպորտային կամրջակ | **2** |
| Սպորտային ներքնակ | **10** |
| Սպորտային նստարան | **4** |
| Սպորտային մագլցող պարան | **3** |

## SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| **Ուժեղ կողմեր(Strengths)** | **Թույլ կողմեր (Weaknesses)** |
|---|---|
| ✓ Ժամանակակից ՏՀՏ տեխնոլոգիաներ<br>✓ Կենսաբանության՝ դիդակտիկ նյութերով և մոդելմերով հագեցած կաբինետ-<br>✓ Գրասենյակային և աշակերտական նոր գույք<br>✓ Տեսահսկման համակարգի առկայություն<br>✓ Երաժշտական արդիական տեխնիկա<br>✓ Հակահրդեհային առաջին անհրաժեշտության միջոցներ<br>✓ Հրաձգարան՝ գույքով | ✗ «Սմարթ» գրատախտակի միակը լինելու պատճառով խնդիրների առաջացում ուսումնական գործընթացում<br>✗ Համակարգիչների սակավություն<br>✗ Գրադարանի ոչ արդիական կահավորում<br>✗ Դասարաններում համակարգիչների բացակայություն<br>✗ Տպիչ սարքերի սակավություն<br>✗ Դպրոցի ծրագրավորվող զանգի ավտոմատ կառավարման համակարգի բացակայություն<br>✗ Քիմիական լաբորատոր նյութերի պակաս<br>✗ Մարզագույքի պակաս |
| **Հնարավորություններ(opportunities)** | **Ռիսկեր(Threats)** |
| ✓ ՏՀՏ հասանելիություն համացանցի միջոցով<br>✓ ՏՀՏ գործիքների վերաբերյալ առցանց վերապատրաստումներ<br>✓ Շրջանավարտների ներուժի օգտագործում դպրոցի արդիականացման գործում | ✗ Ֆորսմաժորային իրավիճակներ<br>✗ Ֆինանսավորման պակասը՝ կապված աշակերտների թվի հետ<br>✗ Ֆինանսավորման բանաձևի փոփոխություն, որն այս պահին թույլ չի տալիս իրականացնել բյուջեի իրատեսական պլանավորում:<br>✗ Կառավարման մոդելի փոփոխությամբ պայմանավորված լիազորությունների փոփոխություն<br>✗ Ինտերնետ կապի վատ որակ դպրոցի աշխարհագրական դիրքով պայմանավորված |

Համադրելով SWOT վերլուծության չորս բաժիններում նշված գործոնները և , ի մի բերելով տվյալ գործոնների փոխկապակցվածության հնարավորությունները, սահմանվել են նպատակներ և խնդիրներ , ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ և առանձնացվել է առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ռազմավարական գործողությունների այն ցանկը, որը բերելու է ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի բարելավմանը.

## ՆՊԱՏԱԿ

- ✓ Դպրոցի նյութատեխնիկական բազայի համապատասխանեցում ժամանակակից կրթության պահանջներին:

## ԽՆԴԻՐՆԵՐ

- ✓ Աշակերտական և գրասենյակային գույքի համալրում
- ✓ Համակարգիչների և «Սմարթ» գրատախտակի ձեռքբերում
- ✓ Քիմիայի լաբորատորիայի նյութերի ապահովում

## ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ➢ Շրջանավարտների ծնողների և կրթության զարգացման մեջ ներգրավված այլ դերակատարների ներգրավում նշված խնդիրների իրականացման շուրջ
- ➢ Դպրոցի գրավչության բարձրացում համայնքում, համայնքային իշխանությունների ներգրավում
- ➢ Տնօրենի և վարչատնտեսական համակարգողի գործառույթների հավասարակշռում և գործառույթների ճիշտ բաշխում
- ➢ Դպրոցի աշխատանքի գրագետ և թափանցիկ լուսաբանում կայքէջում
- ➢ Ինտերնետային օպերատորների կողմից Սարի թաղում նոր կայանի տեղադրում/բանակցությունները ընթանում են/

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ

| | Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ | Ֆինանսական աղբյուրներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Վերահսկո-ղական մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գրադարանի արդիականացում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2024-2025 | Կահույք ,սեղան , աթոռ | Պետբյուջե | 50 քմ տարածքով վերանորոգված , լաքապատված և նոր գույքով համալրված գրադարան | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 2 | Նկարչական սենյակի ստեղծում և գույքի ձեռքբերում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2023-2024 | Լաք, ներկ , լատեքս, մոլբերտներ | Պետբյուջե | Փայտե մոլբերտ 5 հատ և 5 աշակերտական գույք | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 3 | Համակարգիչ | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2023-2027 | Համակարգիչ , նոթբուք | Պետբյուջե | Մեկ նոթբուք, առնվազն երեք համակարգիչ | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 4 | Աշակերտական գույքի համալրում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2023-2027 | Սեղան , աթոռ | Պետբյուջե | 25 սեղան 25 աթոռ | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 5 | Գրասենյակային գույքի համալրում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2023-2024 | Պահարաններ | Պետբյուջե | Մեկ հավաքածու՝ կազմված 3 պահարանից | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Մարզագույքի ձեռքբերում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2025-2026 | Մարզագույք | Պետբյուջե | Գնդակներ 5 հատ, պարան 5 հատ , օղակներ 5 հատ | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 7 | Բազմաֆունկցիոնալ տպիչ սարքի ձեռքբերում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2026-2027 | Տպիչ սարք | Պետբյուջե | 1 հատ | Կառավարման խորհուրդ |
| 8 | Սմարթ գրատախտակի ձեռքբերում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2027-2028 | Սմարթ գրատախտակ | Լրացուցիչ միջոցների առկայության դեպքում | 1 հատ | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 9 | Քիմիայի լաբորատորիայի վերազինում արդիական քիմիական նյութերով | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | 2023-2028 | Շինանյութ , լաբորատոր սարքեր, գույք | Լրացուցիչ միջոցների առկայության դեպքում | Քիմիական փորձերի համար անհրաժեշտ նյութերի հավաքածու | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ |
| 10 | Շրջանավարտների , ծնողական հանայնքի բարեգործությամբ լրացուցիչ ֆինանսական հոսքերի ապահովում | ՄԿԱ գծով համակարգող | 2024-2025 | Կոնտակտային տվյալներ | Ներքին մարդկային ռեսուրս | Ձևավորված շրջանավարտն երի խորհուրդ | Տնօրենի հաշվետվություն ՄԿԱ գծով համակարգողի հաշվետվություն |
| 11 | Ինտերնետ  կապի բարելավում | Տնօրեն Վարչատնտեսական համակարգող | 2023-2024 | Համագործակցութ յուն օպերատորի հետ | Պետբյուջե | Որակյալ ինտերնետ կապ | Վարչատնտեսական համակարգողի հաշվետվություն |

## ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿ

| ՑՈՒՑԻՉ | ՍԱՆԴՂԱԿ | | | |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ | 0 | 2/4 | 3/4 | 4/4 |
| | | | | |






ԾՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Դասարանների ծնողական խորհուրդները ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար: Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Դպրոցի ծնողական խորհուրդը այս ուստարի բաղկացած է 11 անդամից:

Դպրոցի ծնողական խորհուրդը ամբողջ տարվա ընթացքում մասնակից է կրթական գործընթացի աջակցմանը, սոցիալապես անապահով երեխաների օգնության կազմակերպմանը, արտադպրոցական և արտադասարանական ուսումնառության և միջոցառումների կազմակերպմանը և հենարան է հանդիսանում դպրոց- համայնք սերտ կապի համար: Բարձրացնում է դպրոցի գործունեության հետ կապված հարցեր, ստանում է պարզաբանումներ և ներկայացնում է առաջարկություններ: Ակտիվ մասնակցում է ներքին գնահատման հանձնաժողովի աշխատանքներին, ներկայացնում է առաջարկներ: Ներդպրոցական հարցումներին ներգրավվում է հնարավորինս շատ ծնողների՝ ապահովելով համայնքի մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում: Որպեսզի վեր հանվեն ծնողական խորհրդի և դպրոցի գործունեության խնդիրները, իրականացվել են կարիքի գնահատման հարցումներ, որոնք կներկայացվեն ամփոփ տեղեկանքի ձևով:

**Ծնողական խորհրդի աշխատանքներ**

- Մասնակցություն կառավարման խորհրդի աշխատանքներին
- Բարեգործություն (ծանրոցների առաքման աշխատանքների կազմակերպում, այցելություններ անապահով ընտանիքներ և այլն):
- Արտադասարանական, արտադպրոցական կրթության, էքսկուրսիաների կազմակերպում (մասնակցություն արժեհամակարգի ձևավորման գործում, հայրենասիրական դաստիարակություն, ներառականության շեշտադրում, սովորողների շահերի պաշտպանություն և այլն)
- Պայմանավորված համայնքի առանձնահատկությամբ՝ դպրոցի կողմից աշակերտների շրջանում վատ սովորությունների կանխարգելման գործողությունների ակտիվ մասնակցությունը
- Բռնաճնշումների և ընտանեկան բռնության դեպքերի հայտաբերում և իրազեկում դպրոցին
- համայնքի խոցելի լինելու պատճառով՝ սոցանապահով երեխաներին օգնություն տրամադրելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպում

# ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Աշակերտական խորհրդի դերակատարությունը էլ ավելի է կարևորվում կրթօջախում՝ ելնելով դպրոցի դիրքից և հեռավորությունից հիմնական քաղաքային ենթակառուցվածքներից: Աշակերտական խորհրդի ակտիվ մասնակցությունը և նախաձեռնողականությունը դպրոցի կառավարման տարբեր փուլերում խոսում է նրա մասին, որ քաղաքից կտրված այս համայնքում սովորողը գիտակցում է դպրոցի համայնքային կենտրոն դառնալու կարևորությունը և իր դրական դերակատարությամբ ստեղծում է յուրահատուկ փոխօգնության և համերաշխության մթնոլորտ: Թերևս սա 167 դպրոցի աշակերտական խորհրդի ամենաուժեղ կողմն է: Աշակերտական խորհուրդը բաղկացած է 12 անդամից:

Աշակերտական խորհուրդը կազմված է հետևյալ հանձնախմբերից՝ կարգապահական, ռազմամարզական, մշակութային, սոցիալ-առողջապահական , որոնցից յուրաքանչյուրը գործում է իր հանձնախմբի աշխատանքային պլանով: Աշակերտական խորհուրդը մշտապես ներգրավված է դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքում, արտահայտում է ազատ կարծիքներ և ներկայացնում առաջարկներ: Որպեսզի վեր հանենք աշակերտական խորհրդի և դպրոցի գործունեության խնդիրները, կատարել ենք կարիքի գնահատում հարցման միջոցով, որը կներկայացվի ամփոփ տեղեկանքի ձևով:

**Աշակերտական խորհրդի աշխատանքներ**

- ըստ սահմանված կարգի ժամանակին կազմակերպվել են աշակերտական խորհրդի աշխատանքները
- մշտապես ներգրավվել է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում, ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների, ցուցահանդեսների, տոնավաճառների կազմակերպմանը
- կապող օղակ է դպրոցի և համայնքի միջև, համերաշխության մթնոլորտի երաշխավորներից է
- մասնակից է եղել կրթության պետական կառավարման լիազոր մարմնի, քաղաքապետարանի, Էրեբունի վարչական շրջանի կողմից կազմակերպվող միջոցառումներին, զրույցներին, սեմինարներին, քննարկումներին
- 2022թ.-ի գարնանը քաղաքապետարանի կողմից կազմակերպվեցին աշակերտական խորհրդի լիազորությունների և գործառույթների վերապատրաստումներ, որին մասնակցեց նաև դպրոցը, ինչի արդյունքում, կարելի է ասել, ավելի պատշաճ են կազմակերպվում աշակերտական խորհրդի աշխատանքներ:

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| N | Ազգանուն, անուն | Դասարան | Պաշտոն |
|---|---|---|---|
| 1 | Արաբաջյան Աստղիկ | 9 | |
| 2 | Ավետիսյան Նարեկ | 9 | |
| 3 | Հակոբյան Մարիամ | 9 | |
| 4 | Կարապետյան Ռոզալինա | 8 | նախագահ |
| 5 | Տոնոյան Վահե | 8 | |
| 6 | Սակունց Անահիտ | 8 | |
| 7 | Վարդազարյան Հասմիկ | 7ա | |
| 8 | Մովսիսյան Արմեն | 7ա | |
| 9 | Հովհաննիսյան  Հայկ | 7բ | |
| 10 | Դեպերյան Սառա | 7բ | |
| 11 | Արշակյան Միքայել | 6 | |
| 12 | Պեդրույան Անահիտ | 6 | |

# SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| **Ուժեղ կողմեր(Strengths)** | **Թույլ կողմեր (Weaknesses)** |
|---|---|
| ✓ Դպրոց-ծնող առողջ համագործակցություն<br>✓ Ուսումնական հաստատության կանոնադրությամբ մասնակցություն դպրոցի կառավարմանը<br>✓ Համագործակցություն մանկավարժական աշխատողների հետ կրթության կազմակերպման հարցով<br>✓ Իրավունքների և պարտականությունների գիտակցումը<br>✓ Մասնակցությունը ուսումնական հաստատության ներքին գնահատմանը և կրթական ծրագրերի իրականացմանը<br>✓ Ակտիվ մասնակցությունը արտադպրոցական և արտադասարանական միջոցառումների կազմակերպմանը<br>✓ Ինքնավարության և ինքնակառավարման դրսևորմամբ օժտված մարմին լինելը<br>✓ Ակտիվ մասնակցությունը դպրոցի գործունեությանը<br>✓ Կարծիքների ազատ արտահայտում<br>✓ Առաջարկություններով հանդես գալը կառավարման և խորհրդակցական մարմիններում<br>✓ Սովորողների իրավունքներին և պարտականություններին տիրապետելը և ըստ անհրաժեշտության դիրքորշուում արտահայտելը<br>✓ Մասնակցությունը ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին<br>✓ Համագործակցությունը այլ դպրոցների աշակերտական խորհուրդների հետ /հուշագրերի շրջանակներում/<br>✓ Մասնակցությունը ԿԳՄՍ լիազոր մարմնի, համայնքի կողմից կազմակերպած զեկույցներին, միջոցառումներին | × Լիազորությունների և պարտականությունների գիտակցման պակաս<br>× Հասարակական աշխատանքներում ներգրավվելու մոտիվացիայի պակաս<br>× Մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխայի դաստիարակության պահանջների ոչ լրիվ գիտակցում<br>× Թույլ մասնակցություն հիմնական պարտադիր կրթությունը իրականացնելու գործընթացին<br>× Կոմպետենցիաների ոչ լիաժեք գիտակցում և կիրառում<br>× Բարդույթների առկայություն<br>× Այլ ծրագրերի մասնակցության մոտիվացիայի պակաս |

| Հնարավորություններ(Opportunities) | Ռիսկեր(Threats) |
|---|---|
| ✓ Ծնողական խորհրդի անդամների վերապատրաստում<br>✓ Փորձի փոխանակման ծրագրերի հնարավորություն<br>✓ Միջդպրոցական համագործակցությունների ընդլայնում<br>✓ Առցանց ռեսուրսների ապահովում և հասանելիություն | ✗ Համավարակներ և ֆորսմաժորային իրավիճակներ<br>✗ Լիազորությունների սահմանափակում<br>✗ Աշակերտի գերծանրաբեռնվածություն<br>✗ Արտաքին միջավայրում արատավոր երևույթների ազդեցություն |

Համադրելով SWOT վերլուծության չորս բաժիններում նշված գործոնները և, ի մի բերելով տվյալ գործոնների ոխկապակցվածության հնարավորությունները, սահմանվել են նպատակներ և խնդիրներ , ռիսկերի ազդեցությունը մեղմող ործողություններ և առանձնացվել է առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ռազմավարական գործողությունների այն ցանկը, որը երելու է ծնողական և աշակերտական խորհուրդների գործառույթների ամրապնդմանը և ինքնավարության բարձրացմանը .

## ՆՊԱՏԱԿ

- ✓ Խորհրդակցական մարմինների գործունեության բարելավում, դրանց լիարժեք և արդյունավետ ներգրավում դպրոցի զարգացման գործում, մասնակցային կառավարման հզորացում:

## ԽՆԴԻՐՆԵՐ

- ✓ Ապահովել կանոնադրությամբ ամրագրված լիազորությունների լիարժեք իրացումը
- ✓ Ամրապնդել դպրոց -ուսուցիչ- ծնող-սովորող կապը
- ✓ Իրականացնել ինքնավարության խթանմանն ուղղված նախաձեռնություններ
- ✓ Խրախուսել խորհրդակցական և կառավարման մարմինների միջև երկխոսությունը
- ✓ Զարգացնել խորհրդակցական մարմինների կարողությունները
- ✓ Խթանել հետաքրքրությունը դեպի դպրոցը
- ✓ Զարգացնել կարողունակությունները՝ արդյունավետ գործունեության համար
- ✓ Ինքնուրույն նախաձեռնությունների մոտիվացիայի բարձրացում

## ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արատավոր երևույթների ազդեցությունը նվազեցնող իրազեկման գործողությունների իրականացում/ ֆիլմերի դիտում, հանդիպումներ համայնքային կառույցների հետ, զրույցներ հեղինակավոր մարդկանց հետ, հաջողության հասած շրջանավարտների ներգրավում/
- Նոր ՀՊՉ-ով նախատեսված աշակերտի ծանրաբեռնվածության նվազեցում
- Լիազորությունների վերաբերյալ լայն իրազեկում
- Հաջողված փորձ ունեցող դպրոցների հետ հանդիպումների կազմակերպում, համատեղ միջոցառումների կազմակերպում:

## ԾՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ | Ֆինանսակա և աղբյուրներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Վերահսկողական մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Զրույց քննարկումների կազմակերպում՝ ուղղված աշակերտական խորհրդի կարողությունների զարգացմանը | ՄԿԱ գծով համակարգող | 2023-2028 Տարին երկու անգամ | ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ | Ներքին մարդկային ռեսուրս | Իրազեկված և ակտիվ ծնողական համայնք: Տարին առնվազն 2 անգամ իրավունքներին և պարտականություններին վերաբերյալ սեմինարներ: Համատեղ նախաձեռնություններ ի տարեկան Անվազ 0%-ով: | Տնօրեն ՄԿԱ գծով համակարգող Ծնող.խորհրդի նիստերի արձանագրություններ, ՄԿԱ գծով համակարգողի կիսամյակային և տարեկան հաշվետվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **2** | Հարցում ծնողների շրջանում և ծնողների ակտիվ ներգրավում այդ գործընթացում | Ծնողական խորհուրդ Դասղեկներ | 2023-2028 Տարին երկու անգամ | Հարցաթերթիկներ, ֆորմս հարթակ | Ներքին մարդկային ռեսուրս | Տարին առնվազն 2 անգամ դպրոցի գործունեության կարիքի գնահատում | Տնօրեն<br>ՄԿԱ գծով համակարգող<br>Ծնող.խորհրդի նիստերի արձանագրություններ<br>ՄԿԱ գծով համակարգողի կիսամյակային և տարեկան հաշվետվություն<br>Հարցման թերթիկներ |
| **3** | Կարիքների բացահայտման հարցում աշակերտների շրջանում՝ աշխորհրդի ակտիվ ներգրավմամբ | Աշակերտական խորհուրդ Դասղեկներ | 2023-2028 Տարին երկու անգամ | Հարցաթերթիկներ, ֆորմս հարթակ | Ներքին մարդկային ռեսուրս | Ակտիվ և իրազեկված աշակերտական խորհուրդ: Տարին առնվազն երկու անգամ դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կարիքի գնահատում, | Տնօրեն<br>ՄԿԱ գծով համակարգող<br>Աշ.խորհրդի նիստերի արձանագրություններ<br>ՄԿԱ գծով համակարգող կիսամյակային և տարեկան հաշվետվությոն |
| **4** | Իրազեկող զրույց , քննարկումների կազմակերպում աշակերտական խորհրդի հետ | ՄԿԱ գծով համակարգող | 2023-2028 Տարին երկու անգամ | ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ | Ներքին մարդկային ռեսուրս | Ինքնուրույն և նախաձեռնող աշակերտական խորհուրդ<br>Տարին առնվազն 2 անգամ<br>Իր իրավունքներին և պարտականությունններին իրազեկ աշակերտ, աշակերտական խորհուրդ աշխորհրդի նախաձեռնություններ ի առնվազն 10% աճ | Տնօրեն<br>ՄԿԱ գծով համակարգող<br>Աշ. խորհրդի արձանագրություններ<br>ՄԿԱ գծով համակարգողի կիսամյակային և տարեկան հաշվետվություն<br>Ներքին գնահատման հաշվետվություն: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Միջդպրոցական համագործակցություն | Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող | 2023-2028 | Լրացուցիչ գրականություն | Պետբյուջե | Տարին առնվազն 1 անգամ գործընկեր դպրոցների հետ աշ. խորհուրդների համատեղ նախաձեռնություն/ գրքի քննարկումներ, սպորտային միջոցառումներ, մշակութային, քաղաքացիական իրավունքների և այլն/ յուր. համագործակցության շրջանակում: Վերլուծական մտածողությամբ օժտված ազատ կարծիք ատահայտող աշակերտ: | Տնօրեն ՄԿԱ գծով համակարգող Աշ. խորհրդի արձանագրություններ ՄԿԱ գծով համակարգողի կիսամյակային և տարեկան հաշվետվություն Ներքին գնահատման հաշվետվություն |
| 6 | Կարողունակությունների զարգացում | Դասղեկներ Ուսուցիչներ | 2023-2028 | Գործնականի և տեսականի համադրմամբ պաստառներ, ուսումնական նյութեր, ՏՀՏ գործիքներ և ինտերնետային կապ, հետազոտական աշխատանքներ, ուսումնական նախագծեր | Ներքին մարդկային ռեսուրս | ՀՊԶ-ի ամրագրված կարողունակութ յուններով օժտված աշակերտ Առնվազն 1 ուսումնական նախագիծ յուր. դասարանում: | ՄԿԱ գծով համակարգող Աշ. խորհրդի արձանագրություններ ՄԿԱ գծով համակարգողի կիսամյակային և տարեկան հաշվետվություն Ներքին գնահատման հաշվետվություն |
| 7 | Մասնագիտական կողմնորոշման | Դասղեկներ Աշակերտական | 2023-2028 | Տարբեր ոլորտների և մասնագիտությամբ | Պետբյուջե | Մասնագիտական կողմնորոշում | Տնօրեն , ՄԿԱ գծով համակարգող |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հանդիպումների, սեմինարների կազմակերպում | խորհրդի նախագահ | | հայտնի մարդկանց մասին նյութեր, մասնագիտական կարողությունների բացահայտման հարցաթերթիկներ | | ունեցող սովորողներ: Տարբեր ոլորտների հաջողած մասնագետների հետ տարին առնվազն 2 հանդիպում դպրոցի 6-9 դասարանների սովորողների հետ | ՄԿԱ գծով համակարգողի կիսամյակային և տարեկան հաշվետվություն Ներքին գնահատման հաշվետվություն |
| 8 | Կյանքի դժվարին պայմաններում հայտնված աշակերտների օժանդակություն | Դասղեկներ Աշակերտական խորհուրդ | 2023-2028 | Սոցիալական օգնության պարագաներ | Պետբյուջե Ներքին մարդկային ռեսուրս | Հասարակական ակտիվ ներգրավվածութ յուն և դիրքորոշում ունեցող սովորող Տարեկան առնվազն 2 նախաձեռնություն | Տնօրեն ՄԿԱ գծով համակարգող Աշ. խորհրդի արձանագրություններ ՄԿԱ գծով համակարգողի կիսամյակային և տարեկան հաշվետվություն Ներքին գնահատման հաշվետվություն |
| 9 | Ռազմահայրենասիրակա ն թեմաներով ուսումնադաստիարակչ ական միջոցառումների կազմակերպում | ՆԶՊ ուսուցիչ Դասղեկներ | 2023-2028 | Հրաձգարան , զենք, փամփուշտ, պատվոգրեր | Պետբյուջե | Զինապարտությանը պատրաստ սովորող Տարին 2 անգամ հրաձգության մրցույթ | Տնօրեն ՄԿԱ գծով համակարգող ՆԶՊ ուսուցչի հաշվետվություն Ներքին գնահաման հաշվետվություն |
| 10 | Կարգապահության բարելավում | Դասղեկներ Աշակերտական խորհուրդ | 2023-2028 | Ուսումնական նյութեր, ՏՀՏ գործիքներ | Ներքին մարդկային ռեսուրս | Տարին առնվազն 2 անգամ իրավունքների և պարտականություննե րի իրազեկմամբ իր գործառույթները գիտակցող աշակերտ | ՄԿԱ գծով համակարգող ՄԿԱ գծով համակարգողի տարեկան հաշվետվություն |
| 11 | Ազգային, պետական արժեքների ձևավորում և ամրապնդում | Դասղեկներ Ուսուցիչներ Աշակերտական | 2023-2028 | Պաստառներ , ուսումնական նյութեր, ՏՀՏ | Պետբյուջե | Ազգային պետական արժեքների կարևորությունը | ՄԿԱ գծով համակարգող |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | խորհուրդ | | գործիքներ և ինտերնետային կապ | | գիտակցող աշակերտներ , ազգային պետական արժեքների ձևավորմամբ դասարանական անկյուններ: | |
| 12 | Սովորողների մոտիվացիայի բարձրացմանն ուղղված զրույցներ, քննարկումներ | Դասղեկներ Աշակերտական խորհուրդ | 2023-2028 | Ուսումնական նյութեր, ՏՀՏ գործիքներ | | Սովորելու նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող սովորող: Տարեկան առնվազն 2 անգամ մոտիվացնող նախաձեռնություններ ի իրականացում/ հանդիպումներ կրթության գերազանցությամբ աչքի ընկնող դպրոցների հետ, փորձի փոխանակում, լավագույն փորձի տեղայնացում: | Տնօրեն Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող ՈՒԴԱՊ հաշվետվություն ՄԿԱ գծով համակարգողի հաշվետվություն Ներքին գնահատման հաշվետվություն: |
| 13 | Բռնությանը և հոգեբանական ճնշման դեմ ուղղված նախաձեռնություններ | ՄԿԱ գծով համակարգող Դասղեկներ | 2023-2028 | Պաստառներ , ուսումնական նյութեր, ՏՀՏ գործիքներ և ինտերնետային կապ | Պետբյուջե | Ներառական և բազմակարծիք արժեքային համակարգ ունեցող սովորողներ Տարեկան առնվազն 2 տեղեկատվական արշավների կազմակերպում Բռնության և հոգեբանական ճնշման բացառումը | Տնօրեն ՄԿԱ գծով համակարգող ՄԿԱ գծով համակարգողի հաշվետվություն Ներքին գնահատման հաշվետվություն: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | դպրոցում  : Իր իրավունքները գիտակցող աշակերտ | |
| 14 | Հաջողված փորձ ունեցող դպրոցների հետ հանդիպումների կազմակերպում | ՄԿԱ գծով համակարգող | 2023-2028 պարբերաբար | ՏՀՏ գործիքներ, լրացուցիչ ուսումնական նյութեր | Ներքին և արտաքին մարդկային ռեսուրս | Տարին մեկ անգամ հաջողված դպրոցի հետ փորձի փոխանակում | ՄԿԱ գծով համակարգողի հաշվետվություն, աշակերտական խորհրդի հաշվետվություն |

## ԾՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿ

| ՑՈՒՑԻՉ | ՍԱՆԴՂԱԿ | | | |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| ԾՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՎԱՏ | ԲԱՎԱՐԱՐ | ԼԱՎ | ԳԵՐԱԶԱՆՑ |
| | | | | |

## ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԴՈՒՐՍ ԲԵՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

| | |
|---|---|
| 1 | Ունենալ միասնական դպրոցական համազգեստ |
| 2 | Մասնագիտական կողմնորոշման միջոցառումների, սեմինարների կազմակերպում |
| 3 | Բուֆետի վերագործարկում |
| 4 | Տնային հանձնարարությունների  պարզեցում և կրճատում |
| 5 | Ուսուցիչ -ծնող կապի և համագործակցության  զարգացում |
| 6 | Գնահատման օբյեկտիվության բարձրացում |
| 7 | Դասագրքերի բեռնաթափում/հատկապես բնագիտական առարկաների/ |
| 8 | Դասարաններում երեխաների թվի կրճատում |
| 9 | Էքսկուրսիաների հաճախակի կազմակերպում |
| 10 | Բացօթյա դասերի անցկացում |

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ  ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԴՈՒՐՍ ԲԵՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

| | |
|---|---|
| 1 | Ավելացնել արտադասարանական , արտադպրոցական խմբակները |
| 2 | Ուսումնական ծրագրերի բեռնաթափում |
| 3 | Տնային հանձնարարությունների կրճատում |
| 4 | Ուսուցիչ -աշակերտ կապի և համագործակցության  զարգացում |
| 5 | Գնահատման իրատեսականության բարձրացում |
| 6 | Ինտերակտիվ գրատախտակների թվի ավելացում |
| 7 | Հոգեբանի առկայություն դպրոցում |
| 8 | ՏՀՏ դասերի նոր կաբինետի անհրաժեշտություն |
| 9 | Ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում |
| 10 | Մասնագիտական կողմնորոշման միջոցառումների, սեմինարների քանակի ավելացում |

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ  ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դպրոցի կառավարման, կրթական գործունեության իրականացման , ակադեմիա- կան որակի ապահովման համար շատ կարևոր նշանակություն ունեն խորհրդակցական մարմինները, դրանք են՝ մանկավարժական խորհուրդը, առարկայական մեթոդական միավորումները, ծնողական և աշակերտական խորհուրդները: Դպրոցի գործունեության իրատեսականությունը ապահովելու տեսանկյունից հարկ է, որ մանկավարժական խորհուրդը և մեթոդական միավորումները ունենան SMART նպատակներ և խնդիրներ, որոնցից կբխեն համալիր գործողություններ: Որպեսզի վեր հանենք մանկավարժական խորհրդի և մեթոդական միավորումների գործունեության խնդիրները, կատարել ենք կարիքի գնահատում հարցման միջոցով, որը կներկայացվի ամփոփ տեղեկանքի ձևով: Դպրոցում գործում է չորս մեթոդական միավորումներ՝

1. « Տարրական»
2. «Պատմաբանասիրական»
3. «Օտար լեզուներ»
4. «ԲՏՃՄ»

Մեթոդական միավորումներում ընդգրկված են հաստատության բոլոր ուսուցիչները: Ըստ կանոնադրական պահանջների՝ մեթոդական միավորումները քննարկում են ուսումնական ծրագրերը, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, մեթոդական ձեռնարկները և տալիս երաշխավորություններ: Օգոստոս ամսին ներկայացնում են դպրոցական բաղադրիչ ժամերի բաշխման հետ կապված առաջարկություններ:

### ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- ըստ սահմանված կարգի ժամանակին պատշաճ ձևով կայացել են մանկավարժական խորհրդի նիստերը
- քննարկվել են կրթության որակի, ուսումնական միջավայրի, մանկավարժների մասնագիտական որակների բարձրացման, դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին կարգապահական կանոնների հետ կապված հարցեր
- նիստերին երբեմն մասնակցել են ծնողական, աշակերտական խորհուրդների նախագահները , հանդես են եկել առաջարկներով
- ուշադրության կենտրոնում է եղել տարակարգի դիմած, կամավոր, հերթական ատեստավորման ներկայացված ուսուցիչների աշխատանքը, կատարվել է աշխատանքի արդյունքների վերլուծություն
- մշտական քննարկման և ուշադրության կենտրոնում է եղել նոր կիրառվող ՀՊՉ-ն՝ ավելի գործուն դարձնելու համար
- մեթոդական միավորումների նիստերը կազմակերպվել են ժամանակին՝ ըստ սահմանված կարգի
- նիստերի ժամանակ քննարկվել են ուսուցիչների, նաև աշակերտների, ծնողների առաջարկները, որոնց հիմնական նպատակը ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումն է, որակի ապահովումը, մանկավարժի, սովորողի կյանքի և առողջության անվտանգության ապահովում:

# SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| **Ուժեղ կողմեր(Strengths)** | **Թույլ կողմեր (Weaknesses)** |
| --- | --- |
| ✓ Կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպում<br>✓ Հանրակրթական պետական ծրագրերի պատշաճ իրականացում<br>✓ Մասնակցություն կառավարման խորհրդի գործունեությանը<br>✓ Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ<br>✓ Մանկավարժական մեթոդական արդի քննարկումներ և խելամիտ որոշումների կայացում<br>✓ Երեխայի շահերի և իրավունքների պաշտպանություն<br>✓ Միջդպրոցական մեթոդական միավորումների մեկնարկում<br>✓ Սկսնակ ուսուցիչների հետ մասնագիտական , մեթոդական քննարկումներ, վերլուծություններ<br>✓ Ներդպրոցական մեթոդական միավորումների առողջ համագործակցություն և վերլուծություն<br>✓ ՆԴՎ պլանով սահմանված վերահսկողական գործառույթների իրականացում | ✗ Համատեղող ուսուցիչների առկայություն<br>✗ Պարտականությունների թյուրըմբռնում<br>✗ Առարկաների մեկական մասնագետի առկայություն<br>✗ Նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացման փորձի պակաս<br>✗ Նոր ՀՊՉ-ի ներդրման հետ կապված հստակ մեխանիզմների պակաս |
| **Հնարավորություններ(opportunities)** | **Ռիսկեր(Threats)** |
| ✓ Մասնագիտական կրթական ծրագրերում ընդգրկվածություն<br>✓ Ոլորտի առաջատար փորձագետների հետ համագործակցություն | ✗ Մասնագիտական վարկանիշի նսեմացման միտումներ<br>✗ Կադրերի արտահոսք<br>✗ Իրավունքների ոտնահարում<br>✗ Ֆորսմաժորային իրավիճակներ<br>✗ Գործառույթների սահմանափակում<br>✗ Անհարկի թղթաբանություն |

Համադրելով SWOT վերլուծության չորս բաժիններում նշված գործոնները և ,ի մի բերելով տվյալ գործոնների փոխկապակցվածության հնարավորությունները, սահմանվել են նպատակներ և խնդիրներ , ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ և առանձնացվել է առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ռազմավարական գործողությունների այն ցանկը, որը բերելու է մանկավարժական խորհրդի գործառույթների ամրապնդմանը և ինքնավարության բարձրացմանը .

## ՆՊԱՏԱԿ

- ✓ Խորհրդակցական մարմինների գործունեության բարելավում, դրանց լիարժեք և արդյունավետ ներգրավում դպրոցի զարգացման գործում , մասնակցային կառավարման հզորացում

## ԽՆԴԻՐՆԵՐ

- ✓ Մանկավարժական խորհրդի գործառույթների իրականացում ( ըստ կանոնադրության)
- ✓ Մանկավարժական խորհրդի և մեթոդական միավորումների կարողությունների զարգացում
- ✓ Խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացում
- ✓ ՆԴՎ ձևերի սահմանում, իրագործում և վերահսկողություն
- ✓ Մեթոդական միավորումների անդամների կողմից իրենց պարտականությունների գիտակցում
- ✓ Մոտիվացիայի ավելացում
- ✓ Նորարարական մեթոդների կիրառման և ՀՊՉ նոր գործարկվող ծրագրի ներդրում և վերահսկողություն




## ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ➢ Բարձրացնել մանկավարժի վարկանիշը համայնքում և հասարակության մեջ
- ➢ Կադրերի արտահոսքի կանխարգելում աշխատավարձի բարձրացմամբ և դպրոցում աշխատելու գրավչության ավելացմամբ
- ➢ Իրավունքների և նորմատիվ իրավական ակտերի իրազեկում, տեղայնացում
- ➢ ԿԳՄՍ նախարարության հետ քննարկման հարթակներում վերը նշված հարցերի քննարկում և համատեղ լուծումների իրականացում (դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում անհարկի թղթաբանության հետ կապված վերջին միջադեպը և դրա արդյունավետ լուծումը դրա վառ օրինակներից է)։

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ , ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնի-կական պարագաներ | Ֆինանսական աղբյուրներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Վերահսկողա-կան մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Կարողությունների զարգացման սեմինարների կազմակերպում մանկավարժական խորհրդի համար | Տնօրեն | 2023-2028 Տարին երկու անգամ | ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ | Ներքին մարդկային ռեսուրս | Խորհրդակցական մարմնի լիազորությունները գիտակցող և դրա շրջանակում արդյունավետ գործիքակազմեր կիրառող մանկավարժական խորհուրդ<br>Տարին 2 անգամ սեմինարներ օրենսդրական փոփոխությունների, նոր կարգերի , փաստաթղթաշրջանառության վերաբերյալ:<br>Խորհրդի կողմից ուսումնադաստիարակչական գործընթացի վրա ազդելու գործիքակազմի | Տնօրեն<br>Ներքին գնահատման հաշվետվություն<br>ՈՒԴԱՊ հաշվետվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ներկայացում և գործնական կիրառում | |
| 2 | Սեմինարների կազմակերպում, ներքին իրավական ակտերի և կրթության ոլորտի այլ օրենքների վերաբերյալ | Տնօրեն | 2023-2028 Տարին երկու անգամ | Հիմնարար փաստաթղթեր , օրենքներ, որոշումներ, կարգեր | Ներքին մարդկային ռեսուրս | Տարին 2 անգամ դպրոցի գործունեության կարիքի գնահատում | Տնօրեն Ներքին գնահատման հաշվետվություն ՈՒԴԱՊ հաշվետվություն |
| 3 | Միջդպրոցական մեթոդական միավորումների համագործակցություն | Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող Մ/մ նախագահներ | 2023-2028 Տարին մեկ անգամ | ՏՀՏ գործիքներ, վարման փաստաթղթեր, մեթոդական և մանկավարժական զեկույցներ | Պետբյուջե | Յուրաքանչյուր տարի 1 անգամ առաջավոր փորձով նորարարական մեթոդներով օժտված մ/միավորման նախագահներ և անդամներ | Տնօրեն Ներքին գնահատման հաշվետվություն ՈՒԴԱՊ հաշվետվություն |
| 4 | ՆԴՎ ձևերի և գործիքների մշակում | Տնօրեն | 2023-2028 Տարին մեկ անգամ | Հիմնարար փաստաթղթեր | Ներքին մարդկային ռեսուրս | Տարին 1 անգամ մասնագիտական մեթադական միավարման նախագահներից և ուսումնական գծով տնօրենի տեղակալներից բաղկացած աշխատանքային խումբ: Տարեկան մեկ անգամ | Տնօրեն Ներքին գնահատման հաշվետվություն ՈՒԴԱՊ հաշվետվություն: |

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ , ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿ

| ՑՈՒՑԻՉ | ՍԱՆԴՂԱԿ | | | |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ , ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ | 0% | 50% | 75% | 100% |



## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Կառավարման խորհուրդը դպրոցի կոլեգիալ կառավարման մարմինն է, որն իր գործունեությամբ իրականացնում է վերահսկողական և աջակցող գործունեություն: Խորհրդի կարևորության և դերի բարձրացումը անմիջական ազդեցություն ունի դպրոցի կրթադաստիարակչական և ֆինանսական գործունեության վրա:

Հաստատության կառավարման խորհուրդը մշտապես համագործակցել է դպրոցի հետ : Կառավարման խորհրդի հաշվետու շրջանի 33 նիստերից 30-ին տնօրենը և հաշվապահը ներկա են գտնվել խորհրդակցական ձայնի իրավունքով: Տնօրենը պարբերաբար խորհրդի քննարկմանն է ներկայացրել բյուջեի պլանավորումը,նախահաշիվը,հաստիքացուցակը և հավանության դեպքում ներկայացրել լիազոր մարմնի հաստատմանը: Ապահովել է կատարած աշխատանքների հաշվետվողականությունը: Տնօրենը յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ներկայացրել է ուսումնադաստիարակչական աշխատանքների, 5- ամյա զարգացման ծրագրի կատարողականի հաշվետվություն, լսել է առաջարկներ և կատարել հետևություններ: 2018-2023 թթ. դպրոցի տնօրենը և կառավարման խորհուրդը, համագործակցելով միմյանց հետ, ապահովել են դպրոցի կանոնադրական պահանջները , իրականացրել են կառավարման խորհրդի լիազորություններով պայմանավորված գործառույթները:

Կառավարման խորհրդի անդամները ներկայացված են եղել համադպրոցական միջոցառումների ժամանակ:

Կառավարման խորհուրդը՝

- Հաստատել է իր աշխատակարգը
- Մասնակցել է ներքին գնահատմանը
- Վերահսկողություն է իրականացրել տնօրենի գործունեության և զարգացման ծրագրի կատարման նկատմամբ
- Իր լիազորություններով պայմանավորված մասնակցել է նիստերի օրակարգային քննարկումներին , անհրաժեշտության դեպքում ներկայացրել առաջարկություններ:

Դպրոցի կողմից կազմակերպվել է սեմինար կառավարման խորհրդի և խորհրդի անդամի լիազորությունների , իրավունքների և պարտականությունների վերաբերյալ :

### ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կրթական հաստատության արդյունավետ գործունեության համար շատ կարևոր է տնօրեն -կառավարման խորհուրդ համագործակցությունը,որը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից

1. **Հաշվետվողականություն** – տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցություն,որը արտահայտվում է եռամսյակը մեկ անգամ ֆինանսատնտաասական գործունեության հաշվետվությամբ , տարին մեկ անգամ ուսումադաստիարակչական աշխատանքների, հնգամյա ծրագրի կատարողականի ,ներքին գնահատման հաշվետվության միջոցով
2. **Արդյունավետություն** – տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցության արդյունքում ընդհանուր տեսլականի շուրջ համախմբվածություն , խնդիրների իրատեսական վերլուծության արդյունքում ֆինանսատնտեսական , ուսումնադաստիարակչական և կառավարման արդյունքի գնահատում
3. **Համագործակցություն** - տնօրեն-կառավարման խորհուրդ պարբերաբար քննարկումների շնորհիվ արդյունքի շարունակական բարելավում
4. **Իրատեսական պլանավորում , ռեսուրսերի կառավարում –** կառավարման խորհուրդ - տնօրեն սերտ համագործակցության և կենսունակ պլանավորման արդյունքում իրականացվել է ռեսուրսների արդյունավետ բաշխում
5. **Ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարում**-հաշվետվությունների ,ինչպես նաև ներքին գնահատման միջոցով կրթության որակի վերլուծություն

| ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ | ԴՊՐՈՑԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ | ԵՐևԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ | | ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ (ԿԳՄՍ)ՆԱԽԱՐԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ | |
|---|---|---|---|---|---|
| | | Ազգանուն, անուն հայրանուն | Պաշտոն | Ազգանուն, անուն հայրանուն | Պաշտոն |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **1. Ենոքյան Մարգարիտա Հովհաննեսի**<br><br>**2.Հարությունյան Արմանուշ Հենրիկի** | 1.Կարապետյան Հայկանուշ Սամվելի<br><br>2. Կարապետյան Ռոզա Էդիկի | 1.Թարզիմկյան Նարինե Կառլենի<br><br>2.Հարությունյան Հայկանուշ Ստեփանի<br>3.Շահբազյան Լյուբով Լոռվարդի<br><br>4.Քիշմիրյան Կարինե Ռազմիկի | 1.«Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի թատերական խմբակի ղեկավար<br>2. .«Ա. Ցիցիկյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ ուսուցիչ<br>3.Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի 1-ին կարգին մասնագետ<br>4.Չի աշխատում | 1.Անդրեասյան Հասմիկ Գերասիմի | 1.«Երևանի Բ. Ժամկոչյանի անվան հ. 119 ավագ դպրոց» ՊՈԱԿ, ուսուցիչ |

# SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| Ուժեղ կողմեր(Strengths) | Թույլ կողմեր (Weaknesses) |
|---|---|
| ✓ Կառավարման թափանցիկ գործելակերպ<br>✓ Դպրոցի զարգացման ընդհանուր տեսլականին համահունչ որոշումների կայացում<br>✓ Դպրոցի դաստիարակչական աշխատանքների մշտապես աջակցում<br>✓ Սերտ կապը դպրոցի խարհրդակցական մարմինների հետ /ցուցահանդես, միջոցառումներ, սեմինարներ ,քննարկումներ/<br>✓ Օրինակելի փաստաթղթաշրջանառություն | ✗ Խորհրդի կարևորության նվազեցում<br>✗ Խորհրդի անդամների մոտիվացիայի պակաս<br>✗ Կառավարման խորհրդի անդամների հաճախակի փոփոխություն<br>✗ Լիազորությունների ոչ ճիշտ գիտակցում |
| **Հնարավորություններ(opportunities)** | **Ռիսկեր(Threats)** |
| ✓ Կառավարման խորհրդի անդամների վերապատրաստումներ լիազոր մարմնի կողմից | ✗ Խորհրդի ձևավորման կարգի փոփոխություն<br>✗ Կառավարման խորհրդի լիազորության սահմանափակում<br>✗ Կառավարման մոդելի փոփոխություն<br>✗ Կառավարման նոր մոդելով պայմանավորված լիազորությունների սահմանափակում |

Համադրելով SWOT վերլուծության չորս բաժիններում նշված գործոնները և, ի մի բերելով տվյալ գործոնների փոխկապակցվածության հնարավորությունները, սահմանվել են նպատակներ և խնդիրներ , ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ և առանձնացվել է առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ռազմավարական գործողությունների այն ցանկը, որը բերելու է կառավարման խորհրդի գործառույթների ամրապնդմանը և ինքնավարության բարձրացմանը .

## ՆՊԱՏԱԿ

- ✓ Դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում, մասնակցային և հորիզոնական կառավարման մոտեցումների կիրառմամբ կառավարման խորհրդի դերի և նշանակության ամրապնդում

## ԽՆԴԻՐՆԵՐ

- ✓ Կարևորել և հստակեցնել խարհրդակցական մարմնի անդամների լիազորությունները
- ✓ Խթանել երկխոսությունը և փոխգործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների միջև
- ✓ Բարելավել արտակարգ իրավիճակներում կառավարման հմտությունները
- ✓ Գործարկել խորհրդի գործունեությունը ամբողջ ծավալով
- ✓ Կարևորել կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցությունը , մոտիվացնել առաջարկություններով հանդես գալը

## ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ➢ Կառավարման խորհրդի լիազորությունների վերաբերյալ պատշաճ իրազեկում
- ➢ Դպրոցների նոր կառավարման մոդելով պայմանավորված խորհրդի անդամների իրազեկում փոփոխությունների վերաբերյալ

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ | Ֆինանսական աղբյուրներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Վերահսկողական մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Խորհրդի անդամի վերապատրաստում | Խորհրդի անդամներ Տնօրեն | 2023-2025 | Խորհրդի ձևավորման կարգ Կառավարման հրավիրված մասնագետ | Ներքին մարդկային ռեսուրս | Տարին 1 անգամ Իր գործառույթներին պատշաճ տիրապետող և մոտիվացված խորհրդի անդամ: Ճգնաժամային կառավարման տարրերին տիրապետող խորհրդի անդամներ: | Խորհրդի նախագահ Ներքին գնահատման հաշվետվություն |
| 2 | Կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցությա ն խթանում | Խորհրդի նախագահ Տնօրեն | 2023-2025 | Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների ձևավորման կարգ | Ներքին մարդկային ռեսուրս | Տարին 1անգամ Մասնակցային կառավարման մեխանիզմների տիրապետող կառավարման խորհուրդ | Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման հաշվետվություն |
| 3 | Կառավարման խորհուրդ – տնօրեն վերլուծական հանդիպում կարիքի գնահատման համար | Խորհրդի նախագահ Տնօրեն Վարչատնտեսական համակարգող | 2023-2028 Տարին մեկ անգամ | Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների ձևավորման կարգ | Ներքին մարդկային ռեսուրս | Տարին 1անգամ դպրոցի արդյունավետ ֆինանսատնտեսա կան կառավարում | Կառավարման խորհուրդ Ֆինանսատնտեսական հաշվետվություն Ներքին գնահատման հաշվետվություն |

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿ

| ՑՈՒՑԻՉ | ՍԱՆԴՂԱԿ | | | |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ | 0% | 50% | 75% | 100% |
| | | | | |




# ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցի իրատեսական գործունեության կրթության իրականացման, որակի ապահովման, ինչպես նաև ՀՀ ապագա կարողունակ և մրցունակ քաղաքացու ձևավորման գործում մեծ ազդեցություն ունի դեռևս հիմնական դպրոցում աշակերտների մասնակցությունը համայնք- դպրոց, կրթության կառավարման մարմիններ-դպրոց և այլ կազմակերպությունների հետ համագործակցություններում: Լիազոր մարմինների և վարչական շրջանի ներկայացուցիչները պարբերաբար հրավիրվում են դպրոցում կազմակերպվող միջոցառումներին: Աշակերտները ներկայանում են հետազոտական – նախագծային աշխատանքների միջոցով, որը վերաբերում է համայնքի զարգացման առանձնահատկություններին: Հաստատության վարչական և մանկավարժական կազմը ներգրավված է եղել ԿԳՄՍ-ի և լիազոր մարմնի կողմից ներկայացված տարբեր օրենքների քննարկումներին: Շարունակական համագործակցություն կա «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի, ԿՏԱԿ-ի , «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամի, հայկական կարմիր խաչի , № 1 ՏՄԱԿ-ի, ՀՀ պաշտպանության նախարարության , ՀՀ կենտրոնական բանկի , Երևանի թիվ 6,34,47,178,155 և 89 դպրոցների հետ:

Դպրոցի գործունեության նպատակներից կախված՝ տարիներ շարունակ սերտ կապ է եղել դպրոց-համայնք փոխհարաբերություններում : Ձևավորել ենք նոր ավանդույթ՝ դպրոցի կողմից **«Սարի թաղը՝ Երևանի հնագույն թաղ» խորագրով մշակութային օրերի կազմակերպում**՝ համագործակցելով վարչական շրջանի հետ և ներգրավելով ծնողական համայնքին:

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

- աշակերտական, մանկավարժական համակազմի մասնակցությունը համաքաղաքային, համապետական շաբաթօրյակներին
- համաքաղաքային ծառատունկեր
- համագործակցություն հ. 67 ՆՈՒՀ-ի հետ սպորտլանդիայի տեսքով
- Էրեբունի- Երևան տոնակատարություն
- «Սարի թաղը՝ Երևանի հնագույն թաղ» մշակութային օրեր
- տարաբնույթ միջոցառումներ՝ ռազմահայրենասիրական, մշակութային, գեղագիտական ճաշակ ձևավորելու, բեմական, գրական խոսքի զարգացման, արվեստի (ազգային երգ ու պար, թատրոն, երաժշտություն, գրականություն, կինո, օպերա, նկարչություն) տարբեր ճյուղերի, նշանավոր գործիչների, նրանց ստեղծագործությունների հետ կապի հաստատում, ներդպրոցական և արտադպրոցական մրցութային միջոցառումների կազմակերպում
  («Անուշ» պոեմի բեմադրություն- I մրցանակ Երևան քաղաքում
  «Մոնթե Մելքոնյան»- II մրցանակ Երևան քաղաքում
  «Գարեգին Նժդեհ»- I մրցանակ Երևան քաղաքում )

- այցելություն թանգարաններ, համերգասրահներ, Եռաբլուր, Վարպետաց քաղաք, պատմամշակութային արժեք ունեցող վայրեր
- ծնողական համայնքի, մանկավարժական համակազմի համատեղ ջանքերով ամենամյա ավանդույթ դարձած մեր երկրի սահմաններն անառիկ պահող դպրոցի նախկին սան - զինվորների համար անհրաժեշտ պարագաներով, քաղցրեղենով ծանրոցների առաքում զորանոցներ ծնողների միջոցով
- տարբեր սպորտաձևերում և մշակութային տարբեր մրցույթ- փառատոններում դպրոցի սաների գրանցած հաջողությունների լուսաբանում
- հանդիպումներ ԱԻՆ , ՀՀ ոստիկանության աշխատակիցների հետ, ովքեր հանդես են եկել դասախոսություններով՝ աշակերտներին ծանոթացնելով սեյսմիկ պաշտպանության վարքականոններին, աղետների դիմակայության, տարհանման կանոններին, քաղպաշտպանության, ճանապարհային անվտանգության, իրավախախտումների և դրանց աղետալի հետևանքների մասին, ինչպես նաև տակտիկական հատուկ ուսումնավարժանքի անցկացում

# SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| Ուժեղ կողմեր(Strengths) | Թույլ կողմեր (Weaknesses) |
|---|---|
| ✓ Մշտական մասնակցություն ԿԳՄՍ կողմից կազմակերպվող  քննարկումներին/ ՀՊՉ, նոր կարգեր և այլն/<br>✓ Դպրոցական խնդիրների շուրջ համայնքային դպրոցների հետ քննարկումների նախաձեռնում<br>✓ Դպրոցի կողմից ծնողական համայնքի հետ համագործակցության կարևորում<br>✓ Դպրոցների հետ արդյունավետ համագործակցություն գիտական, մշակությանին ծրագրերի շրջանակներում /6,34,47,178 և 89,155 միջև/<br>✓ Համագործակցություն British Council- ի հետ՝ անգլերենի ուսուցիչների վերապատրաստման համատեքստում<br>✓ Գիտաժողովների և կոնֆերանսների մասնակցություն<br>✓ Սերտ կապ և համագործակցություն վարչական շրջանի հետ<br>✓ Պարբերաբար միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպում համայնքի համար<br>✓ 44-օրյա պատերազմում նահատակված դպրոցի սանի անվամբ հրաձգարանի անվանակոչում: Պատերազմի մասնակից սաների հետ մշտական կապի ապահովում<br>✓ Բանակում ծառայող սաների հետ մշտական կապ | ✗ Կառույցների հետ առցանց շփման հասանելիության խնդիր<br>✗ Միջազգային կառույցների հետ շփման պակաս<br>✗ Միջազգային լավագույն փորձի տեղայնացման պակաս |

| Հնարավորություններ(opportunities) | Ռիսկեր(Threats) |
| --- | --- |
| ✓ Շարունակական վերապատրաստումներ ԿԶՆԱԿ հիմնադրամի միջոցով<br>✓ ՏՀՏ վերապատրաստումներ ԿՏԱԿ-ի կողմից<br>✓ Դպրոցի մասնակցությունը Երևան քաղաքի, Էրեբունի վարչական շրջանի կազմակերպած միջոցառումներին<br>✓ Ոստիկանության տարբեր ստորաբաժանումների հետ սեմինարների, զրույց-քննարկումների կազմակերպում<br>✓ ԱԻՆ կողմից արտակարգ իրավիճակների հետ կապված զրույց-քննարկումների կազմակերպում | ✗ Ֆորսմաժորային իրավիճակներ<br>✗ Դպրոցի աշխարհագրական դիրքով պայմանավորվածինտերնետ կապի վատ որակ<br>✗ Համայնքի կողմից շփման մոտիվացիայի պակաս<br>✗ Կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների համագործակցության նվազում |

Համադրելով SWOT վերլուծության չորս բաժիններում նշված գործոնները և ի մի բերելով տվյալ գործոնների փոխկապակցվածության հնարավորությունները՝ սահմանվել են նպատակներ և խնդիրներ , ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ և առանձնացվել է առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ռազմավարական գործողությունների այն ցանկը,որը բերելու է համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների և դպրոցի միջև համագործակցության բարելավմանը.

## ՆՊԱՏԱԿ

- ✓ Կառուցել արդյունավետ հաղորդակցություն կրթության ոլորտի բոլոր դերակատարների հետ՝ ընդլայնելու դպրոցի համագործակցության շրջանակները շահառու լայն խմբերի հետ, ինչպես նաև տեղական և միջազգային կառույցների հետ:

### Համագործակցել ստորև նշված կառույցների հետ.

- ✓ ԿԳՄՍ նախարարություն
- ✓ Լիազոր մարմնի համապատասխան վարչություն

- ✓ Էրեբունի վարչական շրջան
- ✓ Դպրոցներ
- ✓ Համայնքի հետ՝ մասնակից դարձնելով սովորողների արտադպրոցական, արտադասարանական դաստիարակությանը
- ✓ ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԴԿՏՀ-ի հետ դպրոցի աշխատանքային գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով
- ✓ ՆԳՆ Ոստիկանության Էրեբունու բաժնի անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման բաժանմունք
- ✓ Առողջապահական կառույցներ
- ✓ Զորամասեր/ Զինկոմիսարիատ
- ✓ ԱԻՆ
- ✓ Տեղական և միջազգային կրթական կառույցներ

## ԽՆԴԻՐՆԵՐ

- ✓ Համայնքում դպրոցի մրցունակության բարձրացում և բարի համբավի ամրապնդում
- ✓ Համայնքային, մշակութային և կրթական առաջատար դառնալու հավակնություն
- ✓ Շահագրգիռ կառույցների հետ մշտական և փոխադարձ շփման ապահովում
- ✓ Առցանց շփման հասանելիության խնդրի վերացում

## ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ➢ Համայնքի հետ ընդհանուր միջոցառումների և ծրագրերի իրականացում
- ➢ Դպրոցի աշխատանքի թափանցիկ լուսաբանմամբ կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների համագործակցության մոտիվացիայի ավելացում

## ԴՊՐՈՑԻ՝ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ | Ֆինանսական աղբյուրներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Վերահսկողական մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Սարի թաղը Երևանի հնագույն թաղ» մշակութային օրերի կազմակերպում էրեբունի վարչական շրջանի հետ միասին | Դասղեկներ Ուսուցիչներ Աշակերտական խորհուրդ Ծնողական խորհուրդ | 2023-2028 Յուր.աշուն | Նկարչական նյութեր , ստեղծագործական աշխատանքներ: Դպրոց համայնք սերտ կապ | Պետբյուջե | Յուրաքանչյուր աշուն մեկ անգամ | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Տնօրեն Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող մ/մ նախագահներ Ներքին գնահատման հաշվետվություն |
| 2 | Անանուն հարցում ծնողների շրջանում | Ծնողական խորհուրդ | 2023-2028 Տարին մեկ անգամ | Հարցաթերթիկներ կամ գուգլ ֆորմս հարցում | Ներքին մարդկային ռեսուրս | Տարին 1 անգամ , դպրոցի գործունեության իրավիճակի ամենամյա վերլուծություն | ՄԿԱ գծով համակարգող Դասղեկներ |
| 3 | Միջդպրոցական հրաձգության մրցույթի կազմակերպում | Աշակերտական խորհուրդ ՆԶՊ ուսուցիչ | 2023-2028 Տարին մեկ անգամ | Փամփուշտներ , պատվոգրեր | Պետբյուջե | Տարին 2 անգամ /սեպտեմբերի 21, հունվարի 28/ Զենքից օգտվելու և կրակելու կարողությունների զարգացում | Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող Ներքին գնահատման հաշվետվություն |
| 4 | Շաբաթօրյակների կազմակերպում | Աշակերտներ Դասղեկներ | 2023-2028 Տարին երեք անգամ | Ավել, բահ ձեռնոց, պարկ | Պետբյուջե | Տարին 4 անգամ /աշուն, գարուն/ աշակերտների | Լիազոր մարմին ՄԿԱ գծով համակարգող |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարքի ձևավորում, սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան ուսումնական միջավայրի ստեղծում | Դասղեկներ Ներքին գնահատման հաշվետվություն |
| 5 | «Իմ արվեստը դպրոցում» ծրագրի շրջանակում հանդիպումներ | Աշակերտական խորհուրդ | 2023-2028 Տարին մեկ անգամ | Այցելության հրավեր | Պետբյուջե | Առնվազն 12 աշակերտ ԿԳՄՍ նախարարության ծրագրով կհանդիպի արվեստի հայտնի ներկայացուցչի հետ , կձևավորի գեղագիտական ճաշակ և սիրո դրսևորում դեպի արվեստը և մշակույթը | Լիազոր մարմին ՄԿԱ գծով համակարգող Ներքին գնահատման հաշվետվություն |
| 6 | Սպորտլանդիայի կազմակերպում առաջին դասարանի և 67 ՆՈՒՀ-ի ավագ խմբի հետ | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ | 2023-2028 Տարին մեկ անգամ | Համազգեստ տարբերանշանով | Պետբյուջե Ներքին մարդկային ռեսուրս | Ամեն տարի գարնանը ՆՈՒՀ –ի ավագ խմբի և դպրոց առաջին դասարանի միջև 1 սպորտլանդիա | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Տնօրեն ՄԿԱ գծով համակարգող Ներքին գնահատման հաշվետվություն |
| 7 | Ստեղծագործությունների միջդպրոցական քննարկումներ , վիկտորինաների , մրցույթների կազմակերպում | Ուսուցիչներ Մ/մ նախագահներ | 2023-2028 Տարին մեկ անգամ | Լրացուցիչ գրականություն, պաստառներ, զեկույցներ | Ներքին մարդկային ռեսուրս | Տարին առնվազն երկու հանդիպում /6,34, 47 և 178/ և /89,155/ դպրոցների համագործակցությամբն շրջանակներում | Լիազոր մարմին Տնօրեն Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող Ներքին գնահատման հաշվետվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | ԱԻՆ, ոստիկանություն, առողջապահական կառույցների կողմից իրազեկման դասեր, միջոցառումներ | ՆՋՊ ուսուցիչ Բուժքույր Դասղեկներ | 2023-2028 Պարբերաբար | ՏՀՏ գործիքներ, «Սմարթ» դասասենյակ | Ներքին և արտաքին մարդկային ռեսուրս | Տարին 2 անգամ զրույց դասերի կազմակերպում համապատասխան կառույցների կողմից | Տնօրեն Տնօրենի տեղակալ Ներքին գնահատման հաշվետվություն |
| 9 | Համագործակցությո ւն վարչական շրջանի հետ տարբեր միջոցառումների շրջանակներում | ՄԿԱ գծով համակարգող Տնօրենի տեղակալ | 2023-2028 Պարբերաբար | Համագործակցության հրավեր | Ներքին և արտաքին մարդկային ռեսուրս | Տարին 1 անգամ Էրեբունի –Երևան , տարին առնվազն անգամ շաբաթօրյակներ , առնվազն 1 անգամ ցուցահանդես : Աշակերտների կողմից դեպի ՏԻՄ վերաբերմունքի ձևավորում | Տնօրեն Ներքին գնահատման հաշվետվություն |

## ԴՊՐՈՑԻ ՀԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

| ՑՈՒՑԻՉ | ՍԱՆԴՂԱԿ | | | |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| ԴՊՐՈՑԻ ՀԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ | 0% | 50% | 75% | 100% |
| | | | | |

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ուսումնական հաստատության առաքելությունը բոլոր սովորողների համար հասանելի կրթական գործունեության իրականացումն է: Այն իրականացնելու համար անհրաժեշտ է անվտանգ, ապահով միջավայր, նյութատեխնիկական բազա, մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև սովորողների առողջության ամրապնդման և ֆիզիկական զարգացման անհրաժեշտ պայմաններ: Հարկավոր է ձևավորել այնպիսի միջավայր, որտեղ կրթական գործունեության իրականացումը կազմակերպվում է բացառապես ժողովրդավարության հիմունքներով՝ ապահովելով կազմակերպիչների և մասնակիցների իրավունքների իրացում և իրենց կողմից պարտականությունների գիտակցում: Ուսումնական միջավայրը անքակտելիորեն կապված է ենթակառուցվածքների առկայության և որակի հետ,որի ապահովման համար տարիներ շարունակ ջանք և եռանդ չի խնայվել՝ հաշվի առնելով համայնքի մեկուսացած լինելը: Դպրոցում առկա են հակահրդեհային անվտանգության միջոցներ, միջանցքներում փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման պլանները , իսկ աշխատակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու հմտություններին և վարքականոններին: ԱՌԿ պլանի համաձայն, ըստ ժամանակացույցի, կազմակերպվում են տեղեկատվական սեմինարներ, զրույցներ և տարհանումներ, ԺՏԿ ծավալումներ : Տնօրենի հրամանով ստեղծվել են արտակարգ իրավիճակների հանձնաժողովներ (փրկարարարկան, հակահրդեհային, հասարակական կարգի պահպանության և այլն) : Դպրոցում, ըստ սովորողների հետաքրքրությունների, գործում են տարբեր խմբակներ, ինչը շատ կարևոր նշանակություն ունի երեխաների արտադպրոցական ուսուցումը կազմակերպելու համար: Ծնողներից առաջարկություններ են եղել երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար, որպեսզի ապահովվի աշխատող ծնողների երեխաների զբաղվածությունը ուսումնական գործընթացից հետո: Դպրոցի տնօրենությունը, մանկավարժական համակազմը, լավ գիտակցելով համայնքի առանձնահատկությունները, հետևողական աշխատանքներ են տարել թաղամասում բնորոշ մականուններ կպցնելու սովորույթը դպրոցում ի սպառ վերացնելու ուղղությամբ և կարող ենք նշել, որ այդ հետևողական աշխատանքի շնորհիվ չի արձանագրվել արժանապատվության ոտնահարման, հուզական, ահաբեկման (բուլինգի) կամ ֆիզիկական բռնության դեպքեր: Հարկ է նշել , որ այս հարցում շատ մեծ նշանակություն ունի ծնողների կողմից վստահությունը դեպի դպրոցը: Կարևոր է նաև դպրոցի կողմից իրականացված զրույց –քննարկումներին ծնողական համայնքի մասնակցությունը ևականջալուր լինելը հնարավոր խնդիրների քննարկմանը և լուծմանը: Անհրաժեշտ է նշել աշակերտական խորհրդի մասնակցության և դրական ազդեցության մասին: Գտնվելով յուրօրինակ աշխարհագրական դիրքում, ունենալով սահմանափակ հնարավորություններ՝ լուրջ խնդիրներ են առաջանում կրթական միջավայրի ձևավորման համար: Քաղաքի հետ կապող տրանսպորտային միջոցը մեկն է և դրա աշխատանքային ռեժիմի անգամ չնչին խախտման դեպքում խնդիր է առաջանում դպրոցի աշխատանքի բնականոն կազմակերպման հետ (աշակերտների և մանկավարժների ուշացում): Դպրոց տանող փողոցներն ունեն բարեկարգման կարիք : 21-րդ դարի կրթության կազմակերպումը և հմտությունների կիրառումը առանց որակյալ կապի հնարավոր չէ , բայց ամբողջ տարածքը, ինչպես նաև դպրոցը զրկված է որակյալ

ինտերնետային կապ ունենալու հնարավորությունից (լուրջ խնդիրներ են առաջացել հեռավար կրթության կազմակերպման հարցում)։ Քանի որ ուսումնական հաստատությունը գտնվում է Սարի թաղի ծայրամասային հատվածում, որտեղ բնակչությունը քիչ է, դպրոցի՝ տարիներ շարունակ գործող բարի համբավի շնորհիվ է, որ ունենք ծնողների և աշակերտների անդավաճան համայնք, որը, անցնելով բավականին մեծ հեռավորություն, սերնդեսերունդ իր կրթությունը վստահում է միայն 167 դպրոցին։ 2020 թ. պատերազմից հետո ավելի ակնհայտ դարձավ պատսպարանների բացակայությունը, և պետության աջակցության պարագայում այն կղրվի առաջնահերթ լուծման կարիք ունեցող խնդիրների ցանկում (դպրոցը հանդիսանում է ԺՏԿ ծավալման կենտրոն)։

Պարբերաբար կատարվում են հարցումներ մանկավարժների, ծնողների և աշակերտների շրջանում (ամփոփ տեղեկանքները համապատասխան բաժիններում կցված են) , որի արդյունքում պարզ է դառնում դպրոցում գործող բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի մասին, չկան իրավունքների ոտնահարման դեպքեր, բացառված է բռնությունը, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշումը։ Կապված աշխարհաքաղաքական վիճակի և 44-օրյա պատերազմի հետ առավել մեծ ուշադրություն է դարձվում ռազմահայրենասիրական դաստիարակությանը։ Դպրոցն ունի հրաձգարան, որը նորաբարական կահավորմամբ չէ , ձևավորված է դուրսգրված գույքից, բայց ամբողջովին պրակտիկ միջավայր է զենքի հետ շփման և հմտությունների ձեռքբերման, ինչպես նաև զինապարտության նախապատրաստման համար։ Տարին 2 անգամ կազմակերպում են հրաձգության մրցույթներ (սեպտեմբերի 21, հունվարի 28) , որին մասնակցում է դպրոցի ամբողջ համակազմը և աշակերտական կազմը, տրվում են մրցանակներ։ 2022թ հունվարի 28-ին հրաձգարանը անվանակոչվել է դպրոցի նախատակ սան Պարգև Գասպարյանի անունով։ Նախորդ հինգ տարիների ընթացքում դպրոցի տնօրենության և համակազմի ջանքերով կատարվել են բազմաթիվ աշխատանքներ շենքային պայմանների բարելավման, նյութատեխնիկական միջոցների համալրման ուղղությամբ և ուսումնական միջավայրի անհրաժեշտ պայմանների ստեղծման համար։ Ձևավորվել է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ խնդիրները միասին լուծելու, պատասխանատվություն կրելու և որոշումներ կայացնելու հարցում։ Վերանորոգվել են սանհանգույցներ, ձեռք են բերվել ուսումնական և դիդակտիկ պարագաներ, աշակերտական գույք, ՏՀՏ գործիքներ՝ կրթության կազմակերպման ժամանակակից պահանջները ապահովելու համար։ Ուսումնական միջավայրի անհրաժեշտ պայմանների ապահովման համար հարցումներ են կատարվել նաև ուսուցիչների, ծնողների և աշակերտների շրջանում, որի արդյունքում ձևավորվել է պահանջարկի հետևյալ ցանկը .

1. ՏՀՏ գործիքների համալրում
2. Ազգային երգ ու պարի կաբինետի ստեղծում
3. Դիդակտիկ պարագաների արդիականացում

Ուսումնադաստիարակչական պարագաների հագեցվածությունը հասկանալու համար կատարվել է «Որքանո՞վ է դպրոցը հագեցած ուսումնադաստիարակչական գույքով» հարցումը մանկավարժների շրջանում, որի արդյունքում պարզ է դարձել.

## ՈՐՔԱՆՈ՞Վ Է ԴՊՐՈՑԸ ՀԱԳԵՑԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՒՅՔՈՎ






2023-2028 թթ. զարգացման ծրագրում մշակել ենք քայլեր և ընտրել ռազմավարություն դպրոցը որպես բաց ուսումնական միջավայր ձևավորելու, հավասար պայմանների , բազմակարծիք կրթական համակարգի ձևավորման և այն ավելի գրավիչ դարձնելու համար:

# SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| **Ուժեղ կողմեր(Strengths)** | **Թույլ կողմեր (Weaknesses)** |
|---|---|
| ✓ Հարցումների կազմակերպում շահագրգիռ անձանց շրջանակներում և վերլուծություն<br>✓ Երեխայի, ծնողի , մանկավարժի իրավունքների իրացում և պարտականությունների գիտակցում<br>✓ Առողջ ֆիզիկական և հոգեբանական միջավայրի առկայություն<br>✓ Ծնող-դպրոց կապի կարևորում արտադասարանական, արտադպրոցական կրթության կազմակերպման հարցում<br>✓ Հավասար պայմանների առկայություն բոլոր սովորողների համար<br>✓ Մասնակցային կառավարում | ✗ Ֆինանսական միջոցների սղություն<br>✗ Պարտականությունների ոչ լիարժեք գիտակցում<br>✗ Համավարակ, ֆորսմաժորային իրավիճակներ<br>✗ Ենթակառուցվածքների անբավարար վիճակ |
| **Հնարավորություններ(opportunities)** | **Ռիսկեր(Threats)** |
| ✓ Լրացուցիչ ֆինանսական միջոցներ<br>✓ Հիմնանորոգման ծրագրի մեջ ընդգրկում | ✗ Սովորողների մոտիվացիայի պակաս<br>✗ Նոր կառավարման մոդելով պայմանավորված գործառույթների թյուրըմբռնում<br>✗ Ֆինանսավորման անբավարար միջոցներ |

Համադրելով SWOT վերլուծության չորս բաժիններում նշված գործոնները և ի մի բերելով տվյալ գործոնների փոխկապակցվածության հնարավորությունները՝ սահմանվել են նպատակներ և խնդիրներ , ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ և առանձնացվել է առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ռազմավարական գործողությունների այն ցանկը, որը բերելու է ուսումնական միջավայրի բարելավմանը.

## ՆՊԱՏԱԿ

- ✓ Հավասար պայմաններով, բազմակարծիք մասնակցային միջավայրի ձևավորում՝ սովորողների և աշխատողների առողջության և կյանքի անվտանգության ապահովմամբ

## ԽՆԴԻՐՆԵՐ

- ✓ Բազմակարծիք ներառական միջավայրի ստեղծում
- ✓ Հավասար պայմանների ապահովում
- ✓ Իրավունքների և պարտականությունների գիտակցում
- ✓

## ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ➢ Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում
- ➢ Նոր կառավարման մոդելով պայմանավորված գործառույթների գիտակցում, պարտականությունների ճիշտ բաշխում

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ   ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ | Ֆինանսական աղբյուրներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Վերահսկողական մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հավասար պայմանների ապահովում | Վարչատնտեսական համակարգող | 2026-2027 | Թեքահարթակի և հարմարեցված սանհանգույցի կառուցման համար անհրաժեշտ նյութեր | Պետբյուջե | 1 թեքահարթակ, 1 հարմարեցված սանհանգույց | Տնօրեն<br>Ներքին գնահատման հաշվետվություն |
| 2 | Անվտանգ ուսումնական միջավայրի ձևավորում | Տնօրեն<br>Վարչատնտեսական համակարգող | 2023-2028 | Անվտանգության և հակահրդեհային միջոցներ | Պետբյուջե | Նոր կրակմարիչներ՝ 5 հատ | Կառավարման խորհուրդ<br>Լիազոր մարմին<br>Ներքին գնահատման հաշվետվություն |
| 3 | Դպրոցի նկատմամբ սրտացավության ձևավորում | Դասղեկներ<br>Ծնողներ<br>Աշակերտներ | 2023-2028 | Զեկույցներ, ֆիլմեր | Պետբյուջե | Տարին 4 անգամ | Տնօրեն<br>Տնօրենի տեղակալի հաշվետվություն<br>Ներքին գնահատման հաշվետվություն<br>ՈՒԴԱՊ հաշվետվություն |
| 4 | Զրույց-սեմինարներ, քննարկումներ , տեսաֆիլմի դիտում, հանդուրժողականության , վնասակար սովորությունների և մեղիագրագիտության վերաբերյալ | Ուսուցիչներ<br>Դասղեկներ | 2023-2028<br>Պարբերաբար | Համակարգիչ , համացանց , պաստառներ , ուսումնական նյութեր | Պետբյուջե | Տարին առնվազն 2 անգամ | Տնօրենի տեղակալի հաշվետվություն<br>ինֆորմատիկայի ուսուցիչ<br>Ներքին գնահատման հաշվետվություն |
| 5 | Մասնակցային բազմակարծիք | Փոխտնօրեններ, ուսուցիչներ, | 2027-2028 | Զեկույցներ , ՏՀՏ գործիքներ, ինտերնետ | Պետբյուջե | Յուրաքանչյուր կիսամյակ առնվազն 1 | Լիազոր մարմին<br>Կառավարման |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կրթական միջավայրի ձևավորում | դասղեկներ | | կապ, հարցաթերթիկներ | | անգամ տեսանյութի քննարկում, զեկույց կամ դասախոսություն | խորհուրդ Տնօրեն Ներքին գնահատման հաշվետվություն |
| 6 | Բռնության , հոգեբանական ճնշման որևէ փորձի կանխարգելում | Փոխտնօրեններ, ուսուցիչներ, դասղեկներ | 2023-2028 | Զեկույցներ , ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ, հարցաթերթիկներ | Պետբյուջե | Յուրաքանչյուր կիսամյակ առնվազն 1 անգամ տեսանյութի քննարկում, զեկույց կամ դասախոսություն | Լիազոր մարմին Կառավարման խորհուրդ Տնօրեն Տնօրենի տեղակալի հաշվետվություն Ներքին գնահատման հաշվետվություն |



## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿ

| ՑՈՒՑԻՉ | ՍԱՆԴՂԱԿ | | | |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ | 0 | 2/4 | 3/4 | 4/4 |
| | | | | |




# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

21-րդ դարի կրթություն կազմակերպելու համար կարևորագույն պահանջներից մեկը ՀՀ օրենսդրությամբ և հաստատության կանոնադրությամբ սահմանված մանկավարժական մասնագիտական պատշաճ գործողություններ սահմանելն է՝ ուսումնական գործընթացի ապահովումը , ինչպես նաև սովորողների կողմից չափորոշչով սահմանված բովանդակության՝ գիտելիքի, հմտության, դիրքորոշման, արժեքային բաղադրիչի զարգացումը: Հաշվի առնելով նշված պահանջները՝ դպրոցը ստանձնում է իրացնել որակյալ կրթություն՝ պայմանավորված հմուտ և գիտակ մանկավարժական կազմով: 2022թ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանվել են հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները, որոնք ուսուցչի մասնագիտական զարգացման, գիտելիքների և աշխատանքային գործունեության կարողությունների պատասխանատվության նկարագիրն են:




Դպրոցի բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն համապատասխան կրթություն, յուրաքանչյուր տարի ըստ կարգի 1/5-րդը մասնակցել է հերթական ատեստավորման վերապատրաստմանը և ատեստավորվել է: Ուսուցիչների շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը 15 ժամ է: 2018թ.-ից մինչև 2023թ. դպրոցի երեք ուսուցիչներ ունեցել են առաջին աստիճանի տարակարգ , իսկ 2023թ. դպրոցի 6 ուսուցիչներ դիմել են I և II աստիճանի տարակարգի: Մեկ ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորման և հավաքել է 80: Ժամանակակից կրթություն կազմակերպելու համար շատ կարևոր է ուսուցչի կողմից պաշտոնային պարտականությունների գիտակցումը, ինչպես նաև հետևյալ նորմատիվ իրավական ակտերին տիրապետումը.

ա. ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կրթության պետական տեսչության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը:

բ. Առարկայական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտեր, իրավական այլ փաստաթղթեր:

գ. Մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, բժշկական օգնության հիմունքներ:

դ. Աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոններ:







## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



## SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| Ուժեղ կողմեր(Strengths) | Թույլ կողմեր (Weaknesses) |
|---|---|
| ✓ Մանկավարժական աշխատողների մասնակցությունը ուսումնական հաստատության գործունեության կառավարմանը<br>✓ Նյութատեխնիկական բազայի առկայություն մասնագիտական գործունեության համար<br>✓ ՀՊՉ-ի համապատասխան դասապլանների, թեմատիկ պլանների առկայություն<br>✓ Վերապատրաստումների, գիտաժողովների և քննարկումների մասնակցություն<br>✓ Միջդպրոցական մեթոդական միավորումների համագործակցություն (89 և 155 դպրոցների հետ)<br>✓ Համագործակցություն ծնողների հետ երեխաների կրթության և դաստիարակության գործում<br>✓ Սովորողների մոտ ռազմահայրենասիրական դաստիարակության , ինքնուրույն մտածողության և ստեղծագործական ունակությունների զարգացում<br>✓ Նորարարական մեթոդների կիրառում<br>✓ ՏՀՏ կիրառում դասապրոցեսում և ծրագրերի իմացություն<br>✓ Մեթոդական միավորումների համգործակցություն, աջակցություն սկսնակ ուսուցիչներին, առաջավոր փորձի փոխանակում<br>✓ Ատեստավորված մանկավարժներ | ✖ Առարկայական մասնագետների մեկական լինելը<br>✖ Դասարանների հիմնականում մեկական լինելը՝ մեծ խտությամբ , որի արդյունքում դժվարանում է մանկավարժի աշխատանքը<br>✖ Աշխատանքի նկատմամբ գրավչության պակաս<br>✖ Որոշ ուսուցիչների մոտ ՏՀՏ գիտելիքների բարելավման անհրաժեշտություն<br>✖ Ինքնազարգացման մոտիվացիայի պակաս<br>✖ Կամավոր ատեստավորման մոտիվացիայի պակաս<br>✖ Տարակարգ ունեցող ուսուցիչների պակաս<br>✖ Ֆինանսական միջոցների պակաս ուսուցիչների խրախուսման համար<br>✖ Դպրոցի աշխարհագրական դիրքով պայմանավորված նոր կադրերի պակաս<br>✖ Ուսուցիչների հեղինակության պակաս հասարակության մեջ |

| Հնարավորություններ(opportunities) | Ռիսկեր(Threats) |
| --- | --- |
| ✓ Անհատական կարիքի վրա հիմնված ուսուցիչների վերապատրաստման համալիր համակարգի ներդրում<br>✓ Մասնագիտական կրթական ծրագրերում ընդգրկվածություն | ✗ Մասնագիտական վարկանիշի նսեմացման գործողություններ<br>✗ Կադրերի արտահոսք<br>✗ Իրավունքների ոտնահարում |

Համադրելով SWOT վերլուծության չորս բաժիններում նշված գործոնները և ի մի բերելով տվյալ գործոնների փոխկապակցվածության հնարավորությունները՝ սահմանվել են նպատակներ և խնդիրներ , ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ և առանձնացվել է առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ռազմավարական գործողությունների այն ցանկը, որը բերելու է մանկավարժական համակազմի զարգացմանը.

## ՆՊԱՏԱԿ

- ✓ Կրթական նոր քաղաքականության իրականացման պահանջներին համապատասխանող մրցունակ մանկավարժական համակազմի ձևավորում:

## ԽՆԴԻՐՆԵՐ

- ✓ Մանկավարժների կարողությունների ինտենսիվ զարգացում, վերապատրաստումներ դպրոցական մակարդակում
- ✓ Միջդպրոցական մեթոդական միավորումների համագործակցության խթանում
- ✓ Սկսնակ ուսուցիչների շարունակական զարգացում
- ✓ Կամավոր ատեստավորման մասնակցության մոտիվացիայի խթանում
- ✓ Տարակարգի դիմելու գործընթացի խթանում, դպրոցական մակարդակում ուսուցչի աջակցություն
- ✓ Խրախուսման մեխանիզմների մշակում
- ✓ Դպրոցում աշխատելու գրավչության բարձրացում

## ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Բարձրացնել մանկավարժի վարկանիշը համայնքում և հասարակության մեջ
- ✓ Կադրերի արտահոսքի կանխարգելում աշխատավարձի բարձրացմամբ և դպրոցում աշխատելու գրավչության ավելացմամբ
- ✓ Իրավունքների և նորմատիվ իրավական ակտերի իրազեկում, տեղայնացում
- ✓ Ինտենսիվ երկխոսություն կրթության լիազոր մարմնի հետ՝ կանխելու ուսուցիչների հետագա արտահոսքը համակարգից

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցի ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթության որակի բարելավման արդյունավետությունը ապահովելու համար շատ կարևոր են մանկավարժների շարունակական վերապատրաստումները, ինքնակրթությամբ զբաղվելը, 21-րդ դարի հմտություններին տիրապետելը (մեդիագրագիտություն, քննադատական և ստեղծագործական մտածողություն, համագործակցություն և սոցիալական հմտություններ): Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության համար մեծ նշանակություն ունի դպրոցի արդյունավետ կառավարումը, մասնակցային միջավայրի ձևավորումը և խրախուսման մեթոդների և ձևերի սահմանումը, մոտիվացիայի ավելացումը: Սահմանվել են խրախուսման մի քանի ձևեր.

**Ֆինանսական և նոմինացիոն խրախուսումներ ըստ անվանակարգերի**

1. Դպրոցի տարվա լավագույն ուսուցիչ
2. Լավագույն ստեղծարար մտածողությամբ ուսուցիչ
3. Լավագույն հետազոտական-վերլուծական դատողությամբ ուսուցիչ
4. Լավագույն համագործակցող ուսուցիչ

Տարեկան մեկ անգամ դպրոցի ներքին մարդկային ռեսուրսներով կազմակերպվում է վերապատրաստման դասընթաց դասղեկների համար՝ կարևորելով դասարանի կառավարման հիմնախնդիրները, երեխաների շահերի պաշտպանությունը, բուլինգի և այլ արատավոր երևույթների կանխարգելումը: Վերապատրաստումը լինում է ինտերակտիվ, յուրաքանչյուրը ներկայացնում է իր սահմանած նպատակները, դրված խնդիրները և հաջողված փորձը:

Հատկապես կարևոր է համագործակցությունը դպրոցի վարչական կազմի, տարբեր ստորաբաժանումների և խորհրդակցական մարմինների միջև մանկավարժական աշխատողների մասնագիտական որակները գնահատելու , խրախուսելու , խնդիրները վեր հանելու և լուծելու համար: Յուրաքանչյուր կիսամյակ այս օրակարգով հանդիպում-ամփոփում է լինում տնօրենի, փոխտնօրենների և մեթոդական միավորումների նախագահների միջև: Եվ պատահական չէ , որ նվիրյալ մանկավարժների մոտ փոքր-ինչ խրախուսման արդյունքում բարձրանում է մոտիվացիան աշխատանքի, ինքնակրթության և շարունակական վերապատրաստումների նկատմամբ: Դպրոցում արդեն ձևավորված ավանդույթ է, որ ուսուցիչները բացի հերթական ատեստավորմանը մասնակցելու պարտավորությունից տարեկան առնվազն մեկ անգամ մասնակցում են առկա և առցանց այլ վերապատրաստումների (վճարովի կամ անվճար), որոնք բխում են իրենց անհատական կարիքից: Այս արտաքին վերապատրաստումների համակարգումը իրականացվում է մեթոդական միավորումների նախագահների կողմից: Տարվա ավարտին յուրաքանչյուր ուսուցիչ լրացնում է անհատական թերթիկ, որտեղ լրացվում է տարվա ընթացքում անցած վերապատրաստումների մասին ամփոփ տեղեկատվություն: Արդյունքների մշտադիտարկումը իրականացվում է մեթոդական միավորումների նախագահների կողմից դասալսումների ընթացքում:

Անհնարին է չանդրադառնալ մանկավարժին պատեհ-անպատեհ լրացուցիչ գործառույթներով ծանրաբեռնելու պրակտիկային, ինչը բովանդակային առումով պակասեցնում է մանկավարժի ինքնակրթության մոտիվացիան: Այս մասով անհրաժեշտ են կրթական բարեփոխումներ, որոնց արդյունքում ուսուցիչը ստեղծագործելու և դասին պատրաստվելու ավելի շատ ժամանակ կունենա:
Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները զարգացնող միջոցառումներ.

- Իրականացվել են հերթական ատեստավորումներ, ՏՀՏ վերապատրաստումներ (ԿՏԱԿ-ում, էլեկտրոնային մատյանում աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար)
- Միջդպրոցական մեթոդմիավորումների ձևավորում, լավագույն փորձի փոխանակում (հ, 155, հ. 89 և հ. 167 հիմնական դպրոցների միջև)
- Հուշագրի շրջանակներում համագործակցություն հ. 47 միջնակարգ, հ. 34, հ. 178, հ. 6 և հ. 167 հիմնական դպրոցների միջև: Երկու հուշագրերի շրջանակներում կազմակերպվել են գրքերի քննարկումներ (Համաստեղ «Երնեկ այն օրերուն», Աղասի Այվազյան «Սովորական մարդու գինը»)
- Կազմակերպվել են վիկտորինաներ, առարկայական մրցույթներ, միջառարկայական կապերով համեմված դասեր, որոնք նպաստել են նաև մանկավարժական մասնագիտական որակի և հմտության զարգացմանը:
- ՆԴ վերահսկողության շրջանակներում պարբերաբար կատարվել են դասալսումներ, թեմատիկ և բազմակողմանի ուսումնասիրություններ են կատարվել տարակարգի ներկայացված ուսուցիչների մոտ
- Մասնակցություն ՀՊՉ պարզաբանման ներդպրոցական վերապատրաստումներին
- Դասղեկների վերապատրաստումներ
- Անհատական կարիքից բխող արտաքին վերապատրաստումներ՝ ուսուցչի ցանկությամբ և նախաձեռնությամբ
- Սկսնակ ուսուցիչների աջակցության համակարգի առկայություն

| 2018թ. | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. | 2023թ. |
|---|---|---|---|---|---|
| **Կ. Սարգսյան** | | | | | |
| 1. Տարակարգի շնորհում<br>2. Հույսի կամուրջ ներառական կրթություն . կրթություն բոլորի համար թեմայով վերապատրաստում | 1. Կարմիր խաչ «Հոգեբանական առաջին օգնություն» թեմայով վերապատրաստում | Հավաստագիր | 1.ՀՄԿ կողմից իրականացվող 30 ժամյա վերապատրաստման դասընթաց<br>Հերթական ատեստավորման ենթ. ուսուցչի վերապատրաստում | | 1. 21-րդ դարի հմտությունների խթանում<br>2. Չնավորվող կրթություն «Խորհրդակցական մարմինները » թեմայով վերապատրաստում |
| **Ս. Ալեքսանյան** | | | | | |
| | | Ուսուցիչների և ուս. օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | | | Հանրակրթ. Ուս. Հաստատությունների տնօրենների և տն. Տեղակալների վերապատրաստում |
| **Ք. Վարդանյան** | | | | | |
| Տարակարգի շնորհում | | Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ | Հերթական ատեստավորման ենթ. ուսուցչի վերապատրաստում | | 1. 21-րդ դարի հմտությունների խթանում<br>2. Չնավորվող կրթություն դասղեկների վերապատրաստման 10 ժամյա դասընթաց<br>3. Չնավորվող կրթություն «Խորհրդակցական մարմինները » թեմայով վերապատրաստում |
| | | Ուսուցիչների և ուս. օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | | | «Դպրոցի խորհրդակցական մարմինները» սեմինար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Դասղեկների վերապատրաստում |
| | | | | | Հանրակրթ. Ուս. Հաստատությունների տնօրենների և տն. Տեղակալների վերապատրաստում |
| Ա.Հարությունյան | | | | | |
| Հավաստագիր Ուսումնական և վարչական գործընթացում ՏՀՏ ներդրման 30 ժամյա դասընթաց | | Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ | Հավաստագիր Դպրոցի ուսուցիչների և ուսուցչի օգնականի դասավանդման 30 ժամյա դասընթաց | | Զնավորվող կրթություն «Խորհրդակցական մարմինները » թեմայով վերապատրաստում |
| Լ.Վարդանյան | | | | | |
| Տարակարգի շնորհում | | Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ | | | 21-րդ դարի հմտությունների խթանում |
| | | Ուսուցիչների և ուս. օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | | | |
| Գ. Ասատրյան | | | | | |
| Հերթական ատեստ. ենթ. ուսուցչի վերապատրաստում | | Ուսուցիչների և ուս. օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | | | |
| Մ. Հակոբյան | | | | | |
| | | Ուսուցիչների և ուս. օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | | Հերթական ատեստ. ենթ. ուսուցչի վերապատրաստում | |
| Մ. Մարգարյան | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ուսուցիչների և ուս. օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | | Հերթական ատեստ. ենթ. ուսուցչի վերապատրաստում | 21-րդ դարի հմտությունների խթանում |
| | | **Մ. Ենոքյան** | | | |
| Մասնակցություն «Աստվածաշնչի աշխարհը» սեմինարին | | Ուսուցիչների և ուս. օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | Հերթական ատեստավորման ենթ. ուսուցչի վերապատրաստում | | |
| | | Ֆինանսական կրթ.դպրոցում | | | |
| | | **Տ. Հովհաննիսյան** | | | |
| | | Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ | | Հերթական ատեստ. ենթ. ուսուցչի վերապատրաստում | «Աշխարհին առանց թափոնների» սեմինար |
| | | Ուսուցիչների և ուս. օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | | | 21-րդ դարի հմտությունների խթանում |
| | | | | | Ձևավորող կրթություն |
| | | **Ա. Դանիելյան** | | | |
| | | Ուսուցիչների և ուս. օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | | | |
| | | **Հ. Մնացականյան** | | | |
| | | | Ֆինանսական կրթ.դպրոցում | | 21-րդ դարի հմտությունների խթանում |
| | | **Խ. Գևորգյան** | | | |
| | | Ուսուցիչների և ուս. | | | Ձևավորող գնահատում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | | | |
| | | | | | 21-րդ դարի հմտությունների խթանում |
| | | | | | Օրվա դասի պլանավորում |
| | | | | | ՏՀՏ ռեսուրսների կիրառում |
| | | | | | Նախագծային աշխատանքի կիրառում |
| | | | | | Դասալսումներ, դասի վերլուծություն, հետադարձ կապ |
| | | | | | Գնահատում |
| | | | | | Ուս.պլաններ |
| | | | | | Ուսումնառության համընդհանուր ձևավորում |
| | | | | | Մայրենի, Հ.լեզու առ-ի դասի պլանավորում |
| **Ա. Վարդանյան** | | | | | |
| Ձեռնարկատիրական կրթություն | | Ֆինանսական կրթ.դպրոցում | Հերթական ատեստավորման ենթ. ուսուցչի վերապատրաստում | | 21-րդ դարի հմտությունների խթանում |
| | | Ուսուցիչների և ուս. օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | | | |
| **Ա. Թադևոսյան** | | | | | |
| | | | | | 21-րդ դարի հմտությունների խթանում |
| **Շ. Սեդրակյան** | | | | | |
| | | | | | 21-րդ դարի հմտությունների խթանում |
| | | | | | Ուսյալ ազգի վկայագրերը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ռ. Դավթյան | | | | | |
| | | Ուսուցիչների և ուս. օգնականների դասավանդման հմտ. զարգացման վերապատրաստում | | | |
| Հ.Հակոբյան | | | | | |
| | | | | «Ազգային երգ ու պար» | |
| Ռ. Հարությունյան | | | | | |
| | Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ | Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ | Հավաստագիր Դպրոցի ուսուցիչների և ուսուցչի օգնականի դասավանդման 30 ժամյա դասընթաց | | Ջնավորվող կրթություն դասղեկների վերապատրաստման 10 ժամյա դասընթաց 21-րդ դարի հմտությունների խթանում |
| Հ. Բոյաջյան | | | | | |
| | | | | | Կամավոր ատեստավորում՝ 80% արդյունքով |

## SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| Ուժեղ կողմեր(Strengths) | Թույլ կողմեր (Weaknesses) |
|---|---|
| ✓ Ինքնուրույն առցանց հարթակում և առկա վերապատրաստման մասնակցող ուսուցիչներ<br>✓ Մեթոդական միավորումներում սկսնակ ուսուցիչներին շարունակական աջակցության տրամադրման կայացած համակարգ<br>✓ Տարակարգի դիմող ուսուցիչներ<br>✓ Խրախուսման արդյունքում մոտիվացված մանկավարժներ<br>✓ Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ<br>✓ Ինքնակրթությամբ զբաղվող ուսուցիչներ<br>✓ Խրախուսման տարրական մեխանիզմների առկայություն | ✗ Որոշ մանկավարժների մոտ մոտիվացիայի պակաս<br>✗ Կամավոր ատեստավորման դիմելու մոտիվացիայի պակաս<br>✗ Ուսուցչի աշխատանքի գնահատման ձևերի պակաս<br>✗ Մանկավարժի գերծանրաբեռնվածություն՝ պայմանավորված անհարկի փաստաթղթաշրջանառությամբ<br>✗ Կադրերի արտահոսք ոլորտից |
| **Հնարավորություններ(opportunities)** | **Ռիսկեր(Threats)** |
| ✓ Ոլորտի առաջատար փորձագետների հետ համագործակցություն<br>✓ Ուսուցիչների վերապատրաստման համալիր համակարգի ներդրում<br>✓ Կամավոր ատեստավորման պարզեցում<br>✓ Անցում պարտադիր ատեստավորման կարիքից բխող համակարգի | ✗ Ցածր աշխատավարձով պայմանավորված կադրերի արտահոսք<br>✗ Ուսուցչի մոտիվացիայի պակաս<br>✗ Մանկավարժական բուհեր ընդունվողների կտրուկ նվազում |

Համադրելով SWOT վերլուծության չորս բաժիններում նշված գործոնները և ի մի բերելով տվյալ գործոնների փոխկապակցվածության հնարավորությունները՝ սահմանվել են նպատակներ և խնդիրներ , ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ և առանձնացվել է առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ռազմավարական գործողությունների այն ցանկը, որը բերելու է աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների բարելավմանը.

## ՆՊԱՏԱԿ

- ✓ Կրթության արդի պահանջներին համապատասխան մասնագիտական որակներով շարունակական զարգացում գրանցող մանկավարժական համակազմ

## ԽՆԴԻՐՆԵՐ

- ✓ Ուսուցչի գնահատման ձևերի բարելավում
- ✓ Ուսուցչի դերի և հեղինակության բարձրացում
- ✓ Փոխվստահության միջավայրի ձևավորում
- ✓ Մասնագիտական շարունակական վերապատրաստման համակարգի ստեղծում

## ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ➢ Ուսուցչի վարձատրման բարելավում
- ➢ Ուսուցչի դերի կարևորում և նշանակության բարձրացում
- ➢ Թղթավարությամբ պայմանավորված գերծանրաբեռնվածության բեռնաթափում ինքնակրթության մոտիվացիան բարձրացնելու համար
- ➢ Կամավոր ատեստավորման կարգերի փոփոխություն

Հաջորդող 5 տարիների ընթացքում դպրոցը աստիճանաբար ներդնելու է ուսուցչի ներքին գնահատման և ինքնագնահատման մեխանիզմ՝ համաձայն ստորև բերված ցուցիչների: Ուսուցիչներին յուրաքանչյուր տարվա ավարտին գնահատելու է տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովը, որում ներկայացված կլինեն ուսումնական գծով տնօրենի տեղակալները, մեթոդական միավորումների նախագահները, կառավարման խորհրդի անդամներ, արտաքին մասնագետներ: Ուսուցիչը նույնպես իրականացնում է ինքնագնահատում, որի արդյունքները համադրվում են հանձնաժողովի եզրակացության հետ: Արդյունքում յուրաքանչյուր ուսուցիչ ըստ սանդղակի արդյուքների կստանա անհատական պարգևավճար՝ ելնելով տարվա աշխատանքների արդյունքներից: Միևնույն ժամանակ կկազմակերպվի ամփոփիչ միջոցառում և ուսուցիչների մրցանակաբաշխություն՝ ըստ առանձին նոմինացիաների:

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

| ՉԱՓԱՆԻՇ | ՄԻԱՎՈՐ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|
| **Հաշվետվողականություն/15 /** | | |
| Թեմատիկ պլանի համապատասխանություն | 1-5 | |
| Թղթապանակների առկայություն, պատշաճ մատենավարություն | 1-5 | |
| Ծրագրի  կատարողականի համապատասխանություն | 1-5 | |
| Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում աշխատանքի որակ | 1-5 | |
| Հանձնարարականների արագ և պատշաճ կատարում | 1-5 | |
| ԴԿՏՀ համակարգի պատշաճ վարում | 1-5 | |
| **Դասերի որակ/30/** | | |
| Ըստ չափորոշչի դասաժամի կազմակերպում | 1-4 | |
| Դիդակտիկ նյութերի և ՏՀՏ-ի լայն կիրառում | 1-4 | |
| Սովորողների մոտ հետաքրքրության բարձրացում | 1-4 | |
| Տարբերակված մոտեցման դրսևորում | 1-4 | |

| ՉԱՓԱՆԻՇ | ՄԻԱՎՈՐ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|
| **Դասարանի կառավարում/20/** | | |
| Դասարանի կառավարման որակ դրական օրինակի դաստիարակման մեթոդով | 1-3 | |
| Աշակերտների իրավունքների և պարտականությունների գիտակցության ձևավորում | 1-3 | |
| Դասղեկ ծնող հետադարձ կապի ապահովում | 1-3 | |
| Համադպրոցական միջոցառումներին դասղեկական դասարանի մասնակցության ապահովում | 1-3 | |
| Դասարանական գույքի պահպանման նկատմամբ հոգածության ձևավորում | 1-3 | |

| ՉԱՓԱՆԻՇ | ՄԻԱՎՈՐ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|
| **Մասնագիտական աճ/ վերապատրաստում /համագործակցություն/35/** | | |
| Հերթական ատեստավորման արդյունավետություն | 1-5 | |
| Կամավոր ատեստավորման մասնակցություն | 1-3 | |
| Միջդպրոցական մեթոդ միավորումների գործունեության ակտիվության դրսևորում | 1-4 | |
| Տարրակարգի առկայություն կամ նախապատրաստում | 1-3 | |
| Ինքնատիրապետում , փոխօգնություն և սովորելու ունակություն | 1-4 | |
| մ/միավորման նիստերում ակտիվության դրսևորում | 1-5 | |
| Գիտական հոդվածներ | 1-5 | |
| Նախագծային,հետազոտական աշխատանքների առկայություն | 1-5 | |
| Փոխադարձ դասալսումներ,քննարկումներ, վերլուծություններ | 1-5 | |

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ

| | Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ | Ֆինանսական աղբյուրներ | Արդյունքների գնահատում | Վերահսկողական մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Կազմակերպել շարունակական վերապատրաստումներ, զրույցներ, սեմինարներ դպրոցի ներսում | Տնօրենի տեղակալ Մ/մ նախագահներ | 2023-2028 | Ուսումնական նյութեր , ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ | Ներքին մարդկային ռեսուրս | Ամիսը 1 անգամ մ/մ նիստերում, վերապատրաստումները տարին 2 անգամ/դասդիտումներ, ՀՊՉ, նոր կարգեր/ | Տնօրեն Տնօրենի տեղակալ Մ/մ նախագահներ ՄԿԱ գծով համակարգող ՈւԴԱՊ հաշվետվություն տնօրենի տեղակալի հաշվետվություն Մ/մների հաշվետվություններ ՄԿԱ գծով համակարգողի հաշվետվություն |
| 2 | Մասնագիտական ունակությունների զարգացում | Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող Մ/մ նախագահներ | 2023-2028 | Ուսումնական նյութեր , ՏՀՏ գործիներ, ինտերնետ կապ | Ներքին մարդկային ռեսուրս | Տարին առնվազն 1 անգամ կարողունակությունների գնահատում ՆԴՎ-ի միջոցով | Տնօրեն Տնօրենի տեղակալ Մ/մ նախագահներ ՈւԴԱՊ հաշվետվություն Տնօրենի տեղակալի հաշվետվություն Մ/մների հաշվետվություններ |
| 3 | Կամավոր ատեստավորման մասնակցություն, ինքնակրթություն | Մ/մ նախագահներ, Ուսուցիչներ | 2023-2028 | Ուսումնական նյութեր , ՏՀՏ գործիներ, ինտերնետ կապ, | Ներքին մարդկային ռեսուրս | Առնվազն 1 | Տնօրենի տեղակալ ՈւԴԱՊ հաշվետվություն Տնօրենի տեղակալի հաշվետվություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | լրացուցիչ գրականություն | | | Մ/մների հաշվետվություններ, ներքին գնահատման հաշվետվություն |
| 4 | Օլիմպիադաներում և տարբեր մրցույթներում արդյունավետության բարձրացում | Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող Մ/մ նախագահներ | 2023-2028 | Լրացուցիչ գրականություն, պաստառներ և ուսումնական նյութեր | Ներքին մարդկային ռեսուրս | Տարածքային և հանրապետակա ն օլիմպիադաներո ւմ դիպլոմներ, մրցույթների պատվոգրեր | Տնօրեն Տնօրենի տեղակալ Ներքին գնահատման հաշվետվություն Տնօրենի տեղակալի հաշվետվություն ՄԿԱ գծով համակարգողի հաշվետվություն |
| 5 | ՏՀՏ կիրառման գիտելիքների զարգացում | Տնօրենի տեղակալ Մ/մ նախագահներ ինֆորմատիկայի ուսուցիչ | 2023-2028 | Ուսումնական նյութեր , ՏՀՏ գործիներ, ինտերնետ կապ | Ներքին և արտաքին մարդկային ռեսուրս | ՏՀՏ տեխնոլոգիաներ ի տիրապետում և կիրառում բոլոր մանկավարժների կողմից | Տնօրեն Տնօրենի տեղակալ Ներքին գնահատման հաշվետվություն Տնօրենի տեղակալի հաշվետվություն |
| 6 | Համընդհանուր ներառման իրականացման ունակությունների կարողությունների զարգացում | Տնօրենի տեղակալ Մ/մ նախագահներ Ուսուցչի օգնական Ուսուցիչներ | 2023-2028 | Պաստառներ , ուսումնական նյութեր, լրացուցիչ գրականություն, ՏՀՏ գործիներ, ինտերնետ կապ | Ներքին և արտաքին մարդկային ռեսուրս | Կրթության իրացում ԱՌԻՊ-ին և ՄԱԾԱՊ-ին համապատասխ ան | Կառավարման խորհուրդ Տնօրեն Տնօրենի տեղակալ Ներքին գնահատման հաշվետվություն ՈւԴԱՊ հաշվետվություն |
| 7 | Ուսուցիչների ներքին գնահատման և ինքնագնահատման համակարգի աստիճանական ներդրում | Տնօրենի տեղակալ Մ/մ նախագահներ | 2024-2028 | | Ներքին մարդկային ռեսուրս | Ուսուցիչների ներքին գնահատման աշխատող մեխանիզմ | Կառավարման խորհուրդ Տնօրեն Ներքին գնահատման հաշվետվություն ՈւԴԱՊ հաշվետվություն |

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿ

| ՑՈՒՑԻՉ | ՍԱՆԴՂԱԿ | | | |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ | 0% | 50% | 75% | 100% |

## ՈՒՍՈՒՑՉԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

| | |
|---|---|
| 1 | Մեթոդական ուղեցույցներ |
| 2 | Դիդակտիկ պարագաներ |
| 3 | ՏՀՏ վերապատրաստումների կազմակերպում |
| 4 | Թղթավարության նվազեցում |
| 5 | ՀՊՉ դպրոցական վերապատրաստումներ |
| 6 | ԱՈՒՊ-ի լրացման փոխօգնություն |
| 7 | Ինքնակրթություն |



## ՏՀՏ ,ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21-րդ դարի կրթություն իրականացնելու համար կարևորագույն բաղադրիչներից է ՏՀՏ կիրառումը ուսումնական գործընթացում: Քաղաքակրթության զարգացմանը համընթաց ՏՀՏ կիրառման գործընթացը անհրաժեշտ է իրականացնել շարունակական վերապատրաստումների, ինչպես նաև ՏՀՏ գործիքների արդիականացման և հնարավորությունների զարգացման միջոցով: Արդեն մշակույթ է դարձել դպրոցում յուրաքանչյուր առակայից առնվազն ամիսը մեկ անգամ համակարգչային դաս կազմակերպելը, որի արդյունքում դպրոցի սաները զարգացնում են իրենց ՏՀՏ գիտելիքները , ներկայանում ինքնուրույն աշխատանքներով, սահիկաշարերով: ՏՀՏ գիտելիքների ձևավորման համար «Ինֆորմատիկա» և «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկաների կարևորումը առանձնահատուկ նշանակություն ունի: Այդ խնդիրը իրականացվում է հմուտ մանկավարժի և համակարգչային կաբինետի առկայությամբ: Շարունակական իրազեկման դասեր են կազմակերպվում աշակերտների շրջանում մեդիագրագիտության թեմայով՝ աշակերտներին իրական և կեղծ կայքերի և աղբյուրների տարբերակումը սովորեցնելու , վտանգավոր կայքերի օգտագործումից զերծ պահելու նպատակով: Խնդիր է դրված շարունակական աջակցություն ցույց տալ ՏՀՏ գործիքների կիրառման դժվարություններ ունեցող ուսուցիչներին : Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման ,ժամանակակից կրթության կազմակերպման, գրագետ փաստաթղթաշրջանառության, փոփոխվող նորմատիվ իրավական ակտերի ծանոթացման, իրազեկման, էլեկտրոնային մատենավարության, դասագրքերի հայտագրման կազմակերպման և կրթական նորարարություններին ծանոթանալու համար դպրոցն օգտվում է տարբեր կրթական կայքերի հնարավորություններից: Դրանք են՝

- https://kznak.am/
- https://kznakhimnadram.blogspot.com/
- https://cfep.am/hy/
- https://lib.armedu.am/
- https://www.imdproc.am/
- https://esource.armedu.am/
- https://dshh.am/
- https://emis.am/
- https://matyan.emis.am/#/login
- https://www.arlis.am/
- https://www.e-draft.am/
- *Միջազգային այլ կրթական ռեսուրսներ*

ԿՏԱԿ-ի կողմից պարբերաբար իրականացվում են վերապատրաստումներ, որոնց մասնակցում են դպրոցի ուսուցիչները և օպերատորը, կազմակերպվում է քննարկում կայքի գործարկման խնդիրների շուրջ: Քննարկումներին պարբերաբար մասնակցում է նաև տնօրենությունը՝ վեր հանելով խնդիրներ և առաջարկություններ:

# SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| **Ուժեղ կողմեր(Strengths)** | **Թույլ կողմեր (Weaknesses)** |
| --- | --- |
| ✓ ՏՀՏ գործիքների լայն կիրառում, յուրաքանչյուր առակայից առնվազն մեկ անգամ<br>✓ SMART կաբինետի առկայություն<br>✓ Համակարգչային կաբինետի առկայություն<br>✓ ՏՀՏ գործիքների կիրառման իմացություն<br>✓ Համակարգչային ծրագրերի իմացություն<br>✓ Հեռավար դասերի կազմակերպման հմտություն<br>✓ ԴԿՏՀ, ԿՏԱԿ , emis համակարգերի պատշաճ վարում<br>✓ Առարկայական առցանց հարթակի առկայություն<br>✓ Դպրոցի կայքի և ֆեյսբուքյան էջի պատշաճ վարում | × Համակարգիչների պակաս<br>× Էլեկտրոնային գրատախտակների պակաս<br>× Վատորակ ինտերնետային կապ<br>× Բազմաֆունկցիոնալ տպիչների սակավություն |
| **Հնարավորություններ(opportunities)** | **Ռիսկեր(Threats)** |
| ✓ Ինտերնետ կապի որակի բարձրացում<br>✓ ՏՀՏ գործիքների համալրում<br>✓ ՏՀՏ միջավայրի բարելավում | × ֆինանսական ոչ բավարար միջոցներ |

Համադրելով SWOT վերլուծության չորս բաժիններում նշված գործոնները և ի մի բերելով տվյալ գործոնների փոխկապակցվածության հնարավորությունները՝ սահմանվել են նպատակներ և խնդիրներ , ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ և առանձնացվել է առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ռազմավարական գործողությունների այն ցանկը,որը բերելու է հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաների և կիրառվող նորարարական մեթոդների զարգացմանը

## ՆՊԱՏԱԿ

✓ Էլեկտրոնային ուսումնական նյութերի, պաշարների ստեղծմամբ, ՏՀՏ-ների քանակի ավելացմամբ տեղեկատվական և հեռահաղորդակցական կրթական ծրագրերի ապահովում

## ԽՆԴԻՐՆԵՐ

- ✓ Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում

## ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ➢ Ֆինանսական լրացուցիչ միջոցների հայթայթում ՏՀՏ նոր գործիքներ ձեռք բերելու համար

## ՏՀՏ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Գործողություններ | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկակա ն պարագաներ | Ֆինանսական աղբյուրներ | Արդյունքների գնահատում | Վերահսկողական մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սմարթ գրատախտակի ձեռքբերում | Տնօրեն Վարչատնտեսական համակարգող | 2027-2028 | | Լրացուցիչ միջոցներ | Նորարարական տեխնոլոգիայով մեկ սմարթ գրատախտակ | Լիազոր մարմին Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման հաշվետվություն Զարգացման ծրագրի կատարողական |
| 2 | Համակարգիչների ձեռքբերում | Տնօրեն Վարչատնտեսական համակարգող | 2026-2027 | | Պետբյուջե | Նորարարական ծրագրերով երկու համակարգիչ | Լիազոր մարմին Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման հաշվետվություն ,Զարգացման ծրագրի կատարողական |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Լաբորատոր սարքերի ձեռքբերում | Տնօրեն Վարչատնտեսական համակարգող | 2026-2027 | | Լրացուցիչ միջոցներ | Դիդակտիկ և լաբորատոր նյութերով հագեցած դասեր | Լիազոր մարմին Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման հաշվետվություն Զարգացման ծրագրի կատարողական |
| 4 | Հեռավար դասերի կազմակերպման և մեդիագրագիտությա և սեմինար | Տնօրենի տեղակալ ինֆորմատիկայի ուսուցիչ | 2023-2028 Պարբերաբար | ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ | | Մեդիագրագետ, իրազեկ ուսուցիչներ | Տնօրեն Ներքին գնահատման հաշվետվություն |
| 5 | Կապի և հաղորդակցական միջոցների բարելավում | ԿՏԱԿ | 2023-2025 | Տարածքում կապի ապահովման նոր սարքերի տեղադրում | | Որակյալ ինտերնետային ծածկույթ | Տնօրեն Վարչատնտեսական համակարգող |



## ՏՀՏ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿ

| ՑՈՒՑԻՉ | ՍԱՆԴՂԱԿ | | | |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| ՏՀՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ | 0% | 50% | 75% | 100% |
| | | | | |



# ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի կարևորագույն խնդիրներից է արագ զարգացող և փոփոխվող հասարակության պայմաններում նոր մարտահրավերներին կրթության որակի համապատասխանեցումը, ստեղծագործական մտածողության զարգացումը, ինքնուրույն կյանքին նախապատրաստումը: Այս ամենը հաշվի առնելով՝ կարևոր է հանրակրթության հիմնարար սկզբունքների բովանդակային վերանայում, սովորողներին ներկայացվող նոր պահանջների սահմանում, ՀՊՉ-ի գործարկում և փուլային ներդրում: Շատ կարևոր է քանակական գնահատումից որակական գնահատման համակարգի ներդրումը, այն է՝ ձևավորող գնահատման միջոցով կարողունակությունների ձևավորման աստիճանի գնահատումը: Հայաստանի Հանրապետությունը, լինելով համընդհանուր ներառական կրթություն իրականացնող պետություն, կարևորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքի գնահատումը , հարմարեցված միջավայրի ստեղծումը:

Հանրակրթության ոլորտում կարևորագույն խնդիր է որակի բարձրացումը, որը հնարավոր է իրականացնել ուսումնական հաստատությունների կողմից կրթական առաքելության գիտակցմամբ : Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության: Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում նշվում են հետևյալ հիմնական կետերը.

1) կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում

2) հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում, 3) բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում և կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներ

4) կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում:

Մինչև 2030թ. կրթության զարգացման պետական ծրագրում, որպես վերջնական նպատակ սահմանված է. «Ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված, արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ, որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն է տալիս ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, ապահովում է շրջանավարտների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը»:

Նպատակների իրականացման համար ամրագրված ռազմավարական ուղղություններից են՝

1) համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում,

2) կրթության արդյունավետության բարձրացում

3) կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում և արտահանում

Առանձնակի ուշադրություն է դարձվելու նախագծային և հետազոտական աշխատանքների ինտեգրմանը, ինչը նպատակ է հետապնդում զարգացնել սովորողների վերլուծական և ստեղծագործական կարողությունները:
Կարողունակությունների զարգացումը դարձել է կրթության հիմնասյուներից:
